

# ԱՊԱԳԻԱՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1993 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՅՈՒԼԻՍ 2015  
• VOL. XXXVI, NO 1993 • LUNDI, 6 JUILLET 2015 • MONDAY, JULY 6, 2015

1915-2015  
ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
100-ՐԿ ՏԱՐԵՎԱՐՁ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ



## Ռամկավար Ազատական Կուսակցության Ամերիկայի եւ Գանատայի արեւելեան շրջանային վարչության կոչ-յայտարարությունը

Ռամկավար Ազատական Կուսակցության Ամերիկայի եւ Գանատայի Արեւելեան Շրջանային վարչությունը խոր մտախոգութեամբ կը հետեւի շաբաթ մը ի վեր Հայաստանի մէջ ընդհանրապէս եւ յատկապէս Բաղրամեան պողոտայի շուրջ ստեղծուած ժողովրդային շարունակական ցոյցերով ստեղծուած լուրջ կացութեան, եւ ներկայ կոչով կը դիմէ բոլորին, Հայաստանի իշխանութեան եւ բողոքող հասարակութեան՝ դիւրացնելու համապատասխան պայմաններու ստեղծումը, որպէսզի ճամբայ բացուի դէպի երկխօսութիւն եւ իրատես լուծումներու որոնում:

Դուրսէն դիտողի մեր սփիւռքեան դիրքերէն մենք մեզ իրաւասու չենք սեպեր յատուկ լուծումներ առաջարկելու: Սակայն յայտնի է, թէ այսօրուան այս վիճակը հետեւանքն է տնտեսական եւ քաղաքական տարբեր խնդիրներու, ժամանակի ընթացքին անլոյծ մնացած հարցերու, բնակչութեան մէջ կուտակուած մէկէ աւելի դժգոհութեանց: Անհրաժեշտ կը նկատենք, որ իշխանութիւնները ամէն ջանք կատարեն այդպիսի հարցերու կապակցութեամբ վստահութիւն ներշնչող բարեկարգման քայլերը շտապեցնելու եւ զանոնք իրականացնելու: Նոյնպէս կոչ կ'ուղղենք բողոքող զանգրուածին չկարծրացնել իր կեցուածքը ընտրութեամբ իշխանութեան դիրքի վրայ գտնուող համակարգին նկատմամբ, որպէսզի դէպի լուծում առաջնորդող ճանապարհները երկուստեք մնան բաց՝ դէպի իսկական բարօրութիւն մեր հայրենիքին:

Բոլոր պարագաներու տակ, խստիւ դատապարտելի կը նկատենք որեւէ տեսակի բիրտ ուժի եւ միջոցառումներու գործածութիւնը:

Ի վերջոյ, Ցեղասպանութեան Հարիւրամեակի փառահեղ նշումներէն ետք եւ ընթացքին, երբ Հայաստանը եւ հայ ժողովուրդը ապահովեցին բացառաբար համաշխարհային դրական դիրք մը, այսօրուան տագնապալի երեւոյթները ծանրօրէն կը վնասեն դժուարութեամբ վաստակուած այդ դիրքին:

Հայաստանի իշխանութիւնները եւ ժողովուրդը պարտին ամէն ջանք կատարել, որպէսզի դէպի բարեկարգում ճամբաները գործածուին եւ մնան բաց, եւ միւս կողմէ՝ որպէսզի մեր թշնամիները չօգտուին մեր իսկ ձեռքերով ստեղծուած ազգային դիմադրականութեան տկարացումէն:

ՌԱԿ Ամերիկայի եւ Գանատայի Արեւելեան Շրջանային Վարչութիւն

Պոստոն  
28 Յունիս 2015

## Ոչ եւս է Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը

Հայ կաթողիկէ պատրիարքութիւնը եւ Չմմառու պատրիարքական կղերի միաբանութիւնը կը գուժեն Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերբերանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին վախճանումը Հինգշաբթի՝ 25 Յունիս 2015, առաւօտեան ժամը 8:45-ին:

Երանաշնորհի Հայրապետը ծնած էր Գահիրէ, 17 Յունուար 1940-ին: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր 15 Օգոստոս 1965-ին եւ օգնական նշանակուած Գերապատիւ Յովհաննէս վրդ. Գասպարեանին, հետագային՝ Յովհաննէս Պետրոս ԺԸ. Կաթողիկոս Պատրիարք: 1968-1990 եղած էր Գահիրէի արուարձաններէն Հելիոպոլսոյ Սրբուհի Թերեզա Եկեղեցւոյ ժողովրդապետ:

18 Փետրուար 1990-ին, ամենապատիւ Յովհաննէս Պետրոս ԺԸ-ին կողմէ նշանակուած էր Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Թեմին առաքելական վարիչ: 1993-ին մաս կազմած է Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց սինհոդոսին եւ ապա մնալուն սինհոդոսին:



7 Հոկտեմբեր 1999-ին Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց սինհոդոսին կողմէ կ'ընտրուի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք՝ առնելով Ներսէս Պետրոս ԺԹ. անունը:

Իր 16 տարիներու գահակալութեան ընթացքին, Երջանկայիշատակ Հայրապետը անխոնջ նուիրումով ծառայեց հայ Եկեղեցւոյ, ազգին եւ Լիբանանին, եւ գործեց ի խնդիր Հայաստան-Սփիւռք մերձեցումին: Խորապէս մտախոգուեցաւ

Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան ու յատկապէս Երանաշնորհի Հայրապետը ճիգ ու ջանք չխնայեց ի խնդիր լիբանանեան համայնքներուն միջեւ համագործակցութեան ու համակեցութեան, եղաւ համերաշխութեան ու երկխօսութեան ջատագով մը յատկապէս հայ Եկեղեցւոյ նուիրապետութիւններուն հետ:

ԴԻԲԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԻ

## Տոբթ. Արթուր Տեմիրճեան կ'արժանանայ Զեպէքի Ատամնաբոյժներու Ընկերակցութեան Գնահատանքի Պարգեւին

Խոր գոհունակութեամբ տեղեկացանք թէ զաղութիւն սիրուած ու յարգուած երեք անձնաւորութիւններէն Տոբթ. Արթուր Տեմիրճեան վերջերս պարգեւատրուեցաւ Զեպէքի Ատամնաբոյժներու Ընկերակցութեան 2015 տարուան Պատուոյ Մրցանակով (Prix Hommage): Հաստատուած 2007 թուականին, այս պարգեւին կ'արժանանայ Ընկերակցութեան այն անդամը, որ իր բացառիկ վաստակով զարգացուցած է ատամնաբուժութիւնը: Տոբթ. Տեմիրճեան հեղինակն է ատամնաբուժութեան ծիրէն ներս բազմաթիւ հետազոտութիւններու եւ իրատարակութիւններու, ու եղած է Սոնթրէալի Համալսարանի Ատամնաբուժութեան բաժնի երկարամեայ դասախօս:

Այս մասին կարդալ մեր այս թիւի ֆրանսերէն բաժնին մէջ ներկայացուած մանրամասնութիւնները:



# Միասնականության խորտուրտ յառաջընթացքին վրայ

Միասնականությունը մեր հրապարակագրության մեջ ամենա-հեղեղում բառերն է մին է: Չկայ մարդ որ հակառակ է անոր, սակայն ան կը մնայ տակալին որպես ցանկության անելի քան իրագործում, թեև բաղդատմամբ 50-ական եւ 60-ական թուականներու կացութեան, անելի հանդուրժողական եւ գործակցական մթնոլորտ մը յառաջացած է, մասնաւոր Յայոց Ցեղասպանութեան 100-ամեակի միացեալ գործունեութիւններու կապակցութեամբ:

Անցեալի բեւեռացումներու սաստիկ ձգտեալ վիճակը պատճառ եղած է որ տակալին յամենան զգացական որոշ տարբերութիւններ, որոնք արգելք կը հանդիսանան՝ որդեգրելու քաղաքակիրթ ազգերու մէջ շատ բնական նկատուած տարբեր գաղափարախօսութիւններու եւ հաւատքներու գոյակցութիւնը, որպէսզի կարելի ըլլայ մեր ժողովուրդին մէջ ալ բնական նկատելի եւ յարգելի նման տարբերութիւններ, ու գերադասել ազգային գերագոյն շահերը, հատուածական նկատումներու:

Անկասկած, խորհրդային կարգերու փլուզումէն յառաջացած Հայաստանի անկախացումը զգալի չափով խանդավառեց եւ միասնականութեան ուղղութեամբ խոշոր քայլ մը արձանագրեց հայութեան մէջ, հակառակ մեր հայրենիքի դիմագրաւած բազմաթիւ եւ բազմապիսի դժուարութիւններուն: Անհրաժեշտ է սակայն զգուշանալ նոր բեւեռացումներ յառաջացնելէ Սփիւռքահայութեան մէջ, անտեսելով 20-րդ դարու երեք հայկական հանրապետութիւններէն մին կամ միւսը, զուտ հատուածական նպատակներով: Կարելի չէ խուսափիլ պատմական իրողութիւններէն թէ՛ 1918-1920 գոյութիւն ունեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութիւնը (հոգ չէ թէ՛ կարճատեւ, դժուարին ու անհնարին պայմաններու բերմամբ), որուն յաջորդեց խորհրդային Հայաստանի երկրորդ Հանրապետութիւնը (հոգ չէ թէ՛ հ'նչ կարգախօսով) մինչեւ 1991, եւ որուն յաջորդեց այսօրուան Հայաստանի երրորդ

Հանրապետութիւնը: Արդարեւ, այս շարքին հիմը հանդիսացաւ Սարգսյանի հարապատի, Պաշտպանի եւ Ղարաբաղի պատերազմը, որու մահու կենաց անհաւատալի յաղթանակը արդիւնքն էր տեղույն ամբողջ հայութեան՝ իր զօրքերու, քաղաքագետներու, մտաւորականներու, հոգեւորականներու, քաղաքացիներու եւ գիւղացիներու ամբողջական միասնականութեան, անկախաբար թէ՛ ի՞նչ գաղափարախօսութեան կը ծառայէր օրուան իշխանութիւնը:

Տարբեր հարթակի վրայ, լուրջ հետեւանքներով զարգացում մը եղաւ շուրջ 60 տարի առաջ տեղի ունեցած Հայոց Առաքելական Եկեղեցւոյ երկփեղկումը: Առանց վերարժարծելու հարցին մանրամասնութիւնները, ընդունինք թէ Սովետական շրջանին Մայր Աթոռի նսեմացում ու անդամալուծութիւնը գեթ մասամբ դարձանուցեցաւ Անթիլիասի մէջ վերակենդանացնելով Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որու հեղինակութիւնը սահմանուած էր Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի թեմերուն վրայ, անոր սերտ գործակցութիւնը Էջմիածնի Ամենայն Յայոց Կաթողիկոսութեան հետ եղաւ շինիչ ու զիրար ամբողջացնող գոյափճակ մը, մինչեւ 1956, երբ «Սառն Պատերազմ»ի քաղաքական կացինը բաժնեց նաեւ հայ ժողովուրդը:

Այս բաժանման ամենախոշոր զոհը դարձան Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ հարիւրի մօտ ծուխերը եւ անոնց համայնքները: Երկար տարիներ տեւող վերամիացումի բանակցութիւնները ի զուր անցան. առաւելագոյնը որ ստացուեցաւ՝ համագործակցութեան քաջալերանքն էր, որ տարիներու ընթացքին հաստատեց status quo մը: Եթէ չզոյացաւ վարչական ամբողջական ցանկալի միաւորումը, գոնէ կարելի դարձաւ համագործակցութիւնը ոչ միայն Առաքելական մեր եկեղեցիներու միջեւ այլ նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու ու անոնց համայնքներուն միջեւ: Բարեւուեցան նաեւ զոյգ կաթողիկոսութիւններու միջեւ յարաբերութիւնները, եթէ ոչ խորթային ու ամ-

բողջական, գեթ երեւութական, որպէսզի յաջս օտար շրջանակներու, չխաթարուի հայութեան վայելած բարձր վարկն ու համարումը:

Սակայն այսպիսի սայթաթում մըն էր վերջերս Գանատայի մէջ պատահած դրուագ մը: Երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ կը պատրաստուէր Ս. Էջմիածնի գերագոյն պատիւին՝ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանին արժանացնել Գանատայի Վարչապետ Սթիֆըն Հարփըրը առ ի գնահատութիւն հայ ժողովուրդի նկատմամբ Գանատայի կառավարութեան հոգածութեան, ու կը մնար միայն համաձայնիլ յարմար թուականի մը շուրջ, անակնկալ կերպով կը տեղեկացուէր թէ Արամ Ա. Կաթողիկոս Գանատա ժամանելով, արդէն տեսակցութիւն մը ունեցած էր Վարչապետին հետ եւ շքանշան մը յանձնած էր յանուն հայութեան: Ահա օտար պետական անգամային առջեւ հայ եկեղեցական բարձրագոյն հեղինակութիւնը վարկաբեկող երեւոյթ մը, նուազագոյնը՝ հաղորդակցութեան պակաս մը:

Ուրիշ անտեղի, չըսելու համար անհեթեթ արարք մը չէ՞ արդեօք «Ամենայն Յայոց Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս» որակումը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր հաստատման օրէն ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն եղած է նոյնիսկ երբ քաղաքական աննպաստ պայմաններու տակ Ս. Աթոռը ժամանակաւորապէս տեղափոխուած է այլ քաղաքներ: Բայց քանի՞ «Ամենայն Յայոց» կաթողիկոսներ կարելի է ունենալ նոյն ժամանակ, եւ ինչպէ՞ս կարելի է տրամաբանականօրէն հաշտեցնել երկու «Ամենայն Յայոց Կաթողիկոս» բառախաղը:

Մինչ միասնականութեան զարգացումով ադարաքիօրէն կ'ուրախանանք ու կը հպարտանանք, այդ թափը պետք չէ կոտրել անտեղի եւ անհեռատես արարքներով, որպէսզի գալիք սոսկապատրութիւններ ու գործունեութիւններ պսակուին առաւելագոյն յաջողութեամբ:

Յ.Ա.

# ՀԱՅԱՍՏԱՆ 91-ՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐ ԵՐԿԻՐԸ



Հայաստանը խաղաղասեր երկիրներու միջազգային ցանկին վրայ կը գրաւէ 91-րդ դիրքը՝ 162 երկիրներու շարքին: Ան իր նիշը բարելաւած է 6 կետով: Վարկանիշը հրապարակուած է Տնտեսութեան եւ խաղաղութեան Հիմնարկի կայքէջին մէջ:

Տարածաշրջանին մէջ Հայաստան միայն կը զիջի Վրաստանին, որ գրաւած է 79-րդ դիրքը: Ատլըրպէյճան կը գրաւէ 132-րդ դիրքը, Թուրքիան՝ 135-րդ, Իրանը՝ 138-րդ: Ռուսիա գրաւած է 152-րդ դիրքը, Նիկերիոյ եւ Հիսիսային Քորէայի կողքին: Միացեալ Նահանգներ 94-րդն է, իսկ Ուքրանիա՝ 150-րդ:

Տանկի առաջին դիրքը կը գրաւէ Իսլանտան, իսկ վերջին՝ Սուրիան:

**Abaka**  
Hebdomadaire Arménien  
Armenian Weekly ISSN 0382-9251

*Publié par /Published by*  
Le Centre de Publication Tékeyan  
825 rue Manoogian, Saint-Laurent,  
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162  
e-mail: abaka@bellnet.ca  
www.tekeyanmontreal.ca

---

**Պատասխանատու խմբագիր՝**  
**ԱԼԵՏԻՍ ՊԵՂԳԱԼԵԱՆ**

**Ծանուցումներու, նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝**  
**ՍԱԼԵԻ ՄԵՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝**  
**ՄԱՏԱԹ Բ. ՄԵՄՈՒՐԵԱՆ**

---

Canada	
2nd Class \$80 (QC & ON)	
1ère classe/first class \$90	
U.S.A. 1st class (US)\$90	
Autres pays/Other countries:	
1st class (US)\$120	
Per issue \$1.75	

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

# Դժուարագոյն երկընտրանքի առջեւ

## ՅԱԿՈՒՔ ԱԼԵՏԻՔԵԱՆ

Լուրջ փորձագետների կարծիքով, ներկայ պահին Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգի գլխաւոր հարցը ԵՏՄ-ում Ատրապէյճանի հաւանական ընդգրկման խնդիրն է: Փորձագետներից ոմանց համար այդ հաւանականութիւնը, առանց չափազանցութեան, քոչմարային վիճակ է ստեղծելու Հայաստանի համար, մինչդեռ ուրիշների կարծիքով, դա կը լինի եւս մի հանգրուան, որից մեր երկիրը կարող է դուրս գալ նուազագոյն կորուստներով: Այլ խօսքով, բոլոր պարագաներում սպասելի են կորուստներ՝ մեծ կամ փոքր:

Որո՞նք են այսպիսի յոռետեսութեան պատճառները: Առաջին հերթին Ատրապէյճանի շահեկան դիրքը: Սեւ խաւիարի թէ սեւ ոսկու միջոցով, այդ երկրին յամենայնդեպս յաջողուած է վճռական պահերին իր կողմը գրաւել նորանոր կողմնակիցների, որոնք սեփական շահի համար կարող են աչք փակել, եւ փակում են, այդ երկրում մարդու իրաւունքների ու քաղաքական ազատութիւնների ամենակոպիտ խախտումների վրայ: Ու թեւեւ մեր իշխանական լրատուամիջոցները քմծիծաղ են տալիս անընդհատ, սակայն Պաթուի Համաեւրոպական առաջին խաղերի անցկացման փաստն իսկ հերիք է

կշռաչափելու այդ երկրի դիրքի բարձրացումը միջազգային ասպարեզում: Եւ այդ դիրքից նա փորձում է կամք թելադրել, որի արտայայտութիւններից ընդամենը նուազագոյնն է Պաթուի ԵԱՀԿ ներկայացուցչական գրասենեակի փակումը, որը կարելի է դիտարկել ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան ձեւաչափը փոխելու համապատկերում, նոյն համապատկերում տեղադրելով նաեւ շփման գծերի երկայնքին ու լայնքին լարուածութիւնը շիկացնելու Պաթուի գործողութիւնները:

Վերադառնալով Ղարաբաղեան հակամարտութեան հարցին, խիստ ուշագրաւ է փաստը, որ Ատրապէյճանը, ի տարբերութիւն Հայաստանի, ունի անմիջական տարածաշրջանում իր շահերը պաշտպանող առնուազն մէկ երկիր՝ Թուրքիան, որը երբեք չի թաքցրել այսպէս կոչուած «գրաւեալ տարածքները վերահաստատելու (Sic!) հեռանկարով:

Բնականաբար առանձին քննարկման թեմա է Ռուսաստանի դիրքորոշումը, անելի շուտ՝ նրա խորթային նկրտումները միեւնոյն հարցով: Անցնող երկու տասնամեակներում Մոսկուան միշտ էլ պահպանել է Ղարաբաղեան կնճիռը չկարգաւորելու իր դիրքը՝ վերահսկող հակամարտութեան կարգավիճակում: Սակայն

Շար. էջ 3

**“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”**

# Արարատ Բնակարանները (ԱԲ) ունեցաւ իր խորհրդանիշը (լօկօ)

## À toi de créer – Ստեղծագործութիւնը ձերն է

Այսօր, 13 Յունիս 2015, մեր հաւաքական վայրը վերածուած է ցուցասրահի մը: Մուտքին երկար սեղանին վրայ տեղաւորուած են 23 միագոյն կամ գունաւոր գծագրութիւններ, մէկը անմեղ ընտանեկան երեւակայութեամբ, միւսը ազգային շունչով, ուրիշ մը ԱԲ-ու, այսինքն երեցներու բնակավայրի ակնոցով, ահա հատ մըն ալ ուղիղ սեւ երկրաչափական մաքուր գիծերով կամ կլորակ հասկերով:

Մեծն Մոնթրէալի երեք հայկական դպրոցներէն աշակերտներու խումբ մըն են, որոնք իրենց գործերը այսօր կը ներկայացնեն եւ որոնցմէ երեք մրցանակակիրներ նախապէս ընտրուած են չորս հոգիէ բաղկացած յանձնաժողովի (ԺԻՐԻԻ) անդամներէ:

Մրցոյթ է, բայց ո՞վ են կազմակերպողները, որո՞նք են մասնակցողները: Խօսք առաւ ԱԲ-ու ատենապետ եւ մրցոյթի ատենախմբի պատասխանատու Ազատ Թէմիզճեան, որ բացատրեց հայ երիտասարդներու մասնակցութեան կարեւորութիւնը լօկոյի ծրագրի մը շուրջ: Շարունակեց Տիկին Գուլումճեան, ԱԲ-ու ձեռնարկները համադրող մեր Սիլվիկը, յիշեցնելով երեք դպրոցներու՝ Սուրբ Յակոբ, Արմէն Զեպէք եւ Տիրամայր Նարեկ տնօրէններու հետ տեսակցութիւնները, տպուած թղթիկներով չափանիշերը, որոշ գծագրական պայմաններ լրացնելու կարեւորութիւնը: Վերջապէս ան ներկայացուց մրցանակաբաշխութեան յանձնաժողովին անդամները ու իւրաքանչիւրը հրաւիրեց արտայայտուելու այս ուղղութեամբ: Նախ



առաջին ԺԻՐԻԻ, անուանի նկարիչ եւ ապակիի վրայ անգուգական քանդակագործ Եղիա Պաքմազճեան. արուեստագետը բացատրեց այն համակարգը որուն համաձայն ԺԻՐԻԻԻ անդամները կարողացան նախ առաջին տասը գործերուն ապա վերջին հանգրուանին հասնիլ արդարօրէն եւ միաձայնաբար: Ամէնքն ալ շահեցան, ըսաւ ան, բանի որ մասնակցեցան: Պարոն Պաքմազճեան ստանձնեց նաեւ փոքր լեզուական փոփոխութիւններ կատարել մրցանակակիր լօկոյին վրայ: Ապա հրաւիրուեցաւ

Մարինէ Չուլոյեան, երկրորդ ԺԻՐԻԻ, մեծապէս սիրուած եւ գնահատուած նկարչուիկն որ ուրախութիւն յայտնեց թէ երեք մրցանակակիրներէն իւրաքանչիւրը վերոյիշեալ հայ դպրոցները յաճախող աշակերտներ են, ամէն մէկը մէկ դպրոցէն: Վերջին ԺԻՐԻԻ՝ արուեստի տեղեկագրող ԶՏԳ ոգեւորուած մեր ապագայ սերունդին տաղանդը շնորհաւորեց:

Հանդիսավար Սիլվիկ Գուլումճեան մէկ առ մէկ թուեց եւ հրաւիրեց մրցանակակիրները ստանալու նուէրներ:

- Ա. Մրցանակ՝ Լարա Ընէթիլի, Արմէն Զեպէք վարժարանէն, Երկր. 2
- Բ. Մրցանակ՝ Ժագ Աւագեան, Սուրբ Յակոբ վարժարանէն, Երկր. 1
- Գ. Մրցանակ՝ Բաթրիսիա Գալաճեան, Տիրամայր Նարեկ վարժարանէն, 6րդ Ա.

Նկարչուի Չուլոյեան իր նկարներէն հատ մը նուիրեց մրցոյթին Ա. հանդիսացող մրցանակակիրին նաեւ դասաւանդութիւններ, ԱԲ-ն ալ գծագրական պիտոյքներ Ա. եւ Բ. մրցանակները շահողներուն: Նոյնպէս նուէրներ ստացան ոչ միայն դափնեկիրները այլ բոլոր մասնակցողները:

Սրահը թնդաց: Ներկաները՝ Հայ Տունի վարչականներ եւ ՆՍՏՏ-ի կամուր պարմանուիկներ, ծնողքներ, հիւրեր, ԱԲ-ու բնակիչներ, մեծ ու պզտիկ ուրախութեամբ շրջապատեցինք ցուցադրուած լօկօները, իւրաքանչիւրը իր թռիչքով յղացած, ծիրքին թափ տուած: Նկարները պիտի զարդարեն ԱԲ-ու հաւաքական սրահը:

Մեր մամիկներուն պատրաստած սեղանը, միրգերով զարդարուած հատիկ, տեսակաւոր աղի-անուշ համադրամներ, նաեւ օշարակ եւ սուրճ ճաշակեցինք միասնաբար: Շնորհաւորութիւններ ու շնորհակալութիւն բոլորին ու բոլորին: Չմոռնանք, այսօր Արարատ Բնակարանները մշակութային կեդրոն կը համարուի:

Հիւրասիրութիւնը կատարեալ էր:

**Բ. ՏՐԿԱՏԵԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ**

## Հ.Հ. կառավարութիւնը կը կարեւորէ Հայաստան-Իրան երկաթուղիի կառուցումը

Հայաստանի կառավարութիւնը կրնայ յառաջիկային հանդէս գալ յայտարարութեամբ՝ Հայաստան-Իրան երկաթուղիի շինարարութեան իրագործման վերաբերեալ ծրագրաւորուած միջոցառումներու մասով: Այս մասին Ազգային Ժողովին մէջ յայտարարեց Հայաստանի Հանրապետութեան փոխադրամիջոցներու եւ կապի նախարարի տեղակալ Արթուր Առաքելեանը՝ պատասխանելով «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Թեւան Պողոսեանի հարցումին:

«Կառավարութիւնը կարելորում է Հայաստան-Իրան երկաթագծի կառուցումը եւ ձեռնամուխ է լինելու այդ ծրագրի իրագործմանը: Հնարարութեամբ, որ մենք յառաջիկայում հանդէս գանք յստակ յայտարարութիւններով այդ ծրագրի իրագործման վերաբերեալ պլանաւորած միջոցառումների մասով», - «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ ըսած է Առաքելեանը:

Փոխնախարարը ընդգծած, որ Հայաստան-Իրան երկաթուղիի կառուցման համար շատ կարեւոր նախապայման է Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներու վերացումը: «Զանի որ այդ ծրագիրը նախատեսուում է իրա-

կանացնել մասնաւոր ներդրումների եղանակով, շատ կարեւոր նախապայման է Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների վերացումը, որպէսզի այդ երկաթագծի կառուցումը լինի տնտեսապէս շահաւէտ, որպէսզի կանխատեսելի լինի, թէ ինչ օգուտներ կարող է տալ ծրագիրը, ինչ բեռներ կարող են տեղափոխուել ծրագրի իրականացման արդիւնքում», - նշած է փոխնախարարը:

Թեւան Պողոսեանի հարցումին, թէ հնարարութեամբ, որ Հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցքի կառուցման հետեւանքով Հայաստան-Իրան երկաթագիծ ունենալու հեռանկարին այլեւս ուշադրութիւն չյատկացուի, Արթուր Առաքելեանը վստահեցուց, որ երկու ծրագիրն ալ կառավարութեան համար կարեւոր են եւ անոնց իրականացումը պիտի չխանգարեն իրար: Առաքելեանը յստակեցուց, որ մեքենայով այլ բեռներ կը տեղափոխուին, երկաթուղիի միջոցով՝ այլ: Անոր խօսքով՝ Հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցքը եւ Հայաստան-Իրան երկաթուղին այլ խնդիրներ կը լուծեն եւ այդ ծրագիրներու իրականացումը իրար չեն խանգարեր:

## Դժուարագոյն երկընտրանքի...

Շար. եջ 2-էն

դատելով վերջին շուրջ մէկ տարուայ զարգացումներից, աւելի քան պարզորոշ է դառնում, որ Փութինի Ռուսաստանը ջանք չի խնայում Ատրպէյճանին մտցնելու ԵՏՄ փարախ, որին, անշուշտ, համաձայն կը լինի Պաքուս միայն այն դէպքում, երբ Մոսկուան իր վճարական խօսքն ասի Ղարաբաղեան հակամարտութիւնը յօգուտ Ատրպէյճանի լուծելու խնդրում:

Այս իրավիճակում հաւանականութիւնը շատ մեծ է, որ Մոսկուան, ելնելով միջազգային ու տարածաշրջանային սեփական քաղաքական, ռազմավարական ու տնտեսական շահերից, Պաքուսի հետ համաձայնութեան գայ եւ մեր հաշուին պայմանաւորուածութիւն ձեռք բերի Պաքուսի հետ, ընդունելով վերջին ԵՏՄ ակումբ, որտեղ Հայաստանը ակնյայտօրէն կը մնայ մէկուսացած ու միայնակ: Կարելի է ամառկել, նկատի ունենալով այդ ակումբի անդամութեան կոնստուկտիվ ընդունման կարգը, եւ հետեւաբար, Ատրպէյճանի անդամութեան Հայաստանի կողմից մերժման հնարաւորութիւնը: Սակայն ո՞վ, մեր երկրի ո՞ր ղեկավարութիւնը համարձակութիւն կունենայ վէթօ ղնելու ԵՏՄ-ում: Ահա հարցերի հարցը, որի շուրջ, պնդում են մեր լուրջ փորձագետները, անհրաժեշտ են խոքային եւ իրատես քննարկումներ՝ ազգաբնակչութեան մտածող խաւերի մասնակցութեամբ:

«ԱԶԳ»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԷՔԵՏԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹԸ

Արդեն հինգերորդ տարին է, ինչ «Թեքեան Կենտրոն» հիմնադրամը կազմակերպում է գիտելիքների մրցոյթ՝ «Թեքեանական օլիմպիադա», որում իրենց ուժերն են չափում Հայաստանի եւ Արցախի Վ. Թեքեանի անուան դպրոցների աշակերտները: Տարեցտարի ձեռնարկն էլ աւելի մեծ հետաքրքրություն է առաջացնում եւ ընդլայնում է իր ծաւալները: Այս տարի օլիմպիադան անցկացուցեց «Մաթեմատիկա», «Հայոց լեզու եւ գրականու-

րանների թուով 70 աշակերտ, տեղի ունեցաւ Թեքեան Կենտրոնում: Եւ մինչ մասնագիտական յանձնախումբն ամփոփում էր մրցոյթի արդիւնքները, Հիմնադրամը միջոցառման բոլոր մասնակիցներին առաջարկեց հիւրասիրութիւն եւ մշակութային ծրագիր: Այս անգամ նրանք այցելեցին Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոն եւ դիտեցին Հայոց Յեղասպանութեանը անդրադարձող «Շխոնց Միհրան» ներկայացումը՝ պատմութիւն հայ



թիւն» եւ «Անգլերէն լեզու» առարկաներից:

Հիմնադրամը նպատակ ունի օլիմպիադայի միջոցով խթանել եւ խրախուսել հայոց եւ օտար լեզուների, հայ գրականութեան, ինչպէս նաեւ բնագիտական առարկաների իմացութիւնը, առողջ մրցակցութեան պայմաններում հնարաւորութիւն տալ աշակերտներին դրսեւորել իրենց գիտելիքները, ինչպէս նաեւ ծանօթանալ տարբեր մարզերում բնակուող հասակակիցների հետ:

Թեքեանական 5-րդ օլիմպիադան, որին մասնակցեց Երեւանի, Գիւմրիի, Ստեփանաւանի, Կարբիի եւ Բերձորի (Արցախ) Վ. Թեքեանի անուան դպրոցների 8-րդ դասա-

ծողովրդի կարօտի մասին:

Այնուհետեւ միջոցառումը կրկին տեղափոխուեց Թեքեան Կենտրոն, որտեղ տեղի ունեցաւ մրցանակաբաշխութեան հանդիսաւոր արարողութիւնը եւ յայտարարուեցին յաղթող ճանաչուած աշակերտների անունները: Սակայն պետք է նշել, որ չկային պարտուողներ, քանի որ բոլոր մասնակիցներն էլ Հիմնադրամի կողմից արժանացան խրախուսական մրցանակների: Միջոցառմանը ներկայ էին հիւրեր Հայաստանից եւ Արցախից:

Հիւրերին եւ օլիմպիադայի մասնակիցներին ողջունեց Թեքեան Կենտրոնի տնօրէն Արմէն Ծուլիկեանը: Շնորհաւորելով յաղթողներին, նա մասնաւորապէս փաստեց,



որ աւանդական են դարձել Հայաստանում եւ Արցախում գործող Վ. Թեքեանի անուան հինգ դպրոցների եւ Թեքեան Կենտրոնի փոխադարձ կապերը, եւ արդեն կայացել է թեքեանական թիւ, որը

միասնական նորանոր յաջողութիւններ է գրանցում, քանզի մէկի յաջողութիւնն ու յաղթանակը՝ բոլորի յաջողութիւնն ու հպարտութիւնն է: Տնօրէնը նաեւ խորին  
**Շար. Էջ 14**

## Անդրադարձ... Անդրադարձին... «Հորիզոն» պետք չունի Արդարացնել ջանալ Անարդարանալին.

Այս եղելութեան մասին մենք նպատակ չ'ունիք լրագրական, անվերջանալի փոխանակումներու ձեռնարկելու:

Ի գիտութիւն սիւթին անտեղեակ ընթերցողին, մեր այս գրութիւնը կը վերաբերի, մեր 13 Յունիս թիւին մէջ տեղ գտած առաջին էջի լրատուութեան եւ իբրեւ անոր պատասխան «Հորիզոն»ի 19 Յունիս թիւին մէջ երեւցած «Անդրադարձ» վերնագրով երկար գրութեան:

«Հորիզոն» իր այդ գրութեան մէջ զլիաւորաբար կը ջանայ արդարացնել այն ինչ որ պարզապէս անարդարանալի է:

Երբ Հայ Եկեղեցւոյ, Ամենայն Հայոց Հայրապետը, որպէս գերագոյն պետ, քաղաքական անձնաւորութիւն մը կը պատուէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Գերագոյն շքանշանով, ինչով կարելի է արդարացնել որ Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական մէկ ուրիշ Աթոռի գահակալը, մեծ փութկոտութեամբ եւ ջանասիրութեամբ, հապճեպ տեղափոխութեամբ մը, նոյն այդ անձնաւորութիւնը պատուէ մէկ ուրիշ շքանշանով:

Օտարին համար բոլորովին շփոթեցուցիչ չըսելու համար անտեղի այս արարքը «Հորիզոն» կը ջանայ արդարացնել:

Նոյնպէս, Հայաստանեայց Եկեղեցւոյ որեւէ մէկ Թեմի տարածքին մէջ

երկու անկախ Առաջնորդներու գոյութիւնը անվիճելիօրէն անընդունելի ըլլալու իրականութիւնը «Հորիզոն» կը ջանայ արդարացնել տասը տարի առաջ «2005»-ին իր հրատարակած այս կամ այն «բացատրութիւններով»:

Վերջապէս «Հորիզոն» պարտի նախընտրաբար զբաղիլ Հ.Յ.Դ.-ի ներքին հարցերով որոնք շատ են: Ինք ի՞նչ գիտէ ՌԱԿ.-ի ներքին հարցերուն մասին եւ «Ապագայ»ին, ՌԱԿ.-ին մէջ, ունեցած դիրքին մասին:

Այս օրերուն բոլորիս պարտականութիւնն է ամեն ջանք եւ ոյժ տրամադրել իսկական եւ ոչ թէ ձեւական ազգային միասնականութիւն ստեղծելու աշխատանքին:

Ժամանակի ընթացքին ստեղծուած ջլատիչ եւ անբնական գործուներութեանց ձեւերը, պետք է ջանալ վերացնել եւ ոչ թէ միասնականութիւն ստեղծելու աշխատանքին հետեւելու:

Եկեք յաջող հարիւրամեակի վաղորդայնին, քաջութիւնը ունենանք բոլորիս համար յայտնի ճիշդին ճիշդ ըսել, եւ սխալին սխալ ըսել, եւ ամենակարեւորը՝ դէպի ազգային նոր իրագործումներ երթալու աշխատանքին համար իսկական առողջ միասնականութիւն ստեղծել:

# Յարգանք Նահատակ Գրողներու Յիշատակին. Գրական Երեկոյ Նուիրուած Դանիել Վարուժանին

ՅԱԿՈԲ ՎԱՐՎԷԱՆՆԵԱՆ ԿԸ ԳՐԷ.

*«Մենք, Չաւակներդ օգոստփառ, Դիտի կերտնեք Նոր Արշալոյս»*

Գեղեցիկ նախաձեռնութիւնը առաւ Մեծագոյն Նիւ Եորքի Թէթեան Մշակութային Միութիւնը յարգելու եւ յիշելու Յեղասպանութեան զոհ զացած մեր նահատակ ու անմահանուն գրողներէն ոմանց: Այդ շարքին առաջինը եղաւ Դանիել Վարուժան: Մայիս 29, 2015, Ուրբաթ երեկոյեան ԹՄՄԻ Նիւ Եորքի կեդրոնը հաւաքուած էր մեր ծանօթ գրասէր հասարակութիւնը: Միջին Արեւելքի մայր գաղութներու մէջ կազմակերպուած նման լուրջ գրական երեկոյի մը ներկայ ըլլալու հաճոյքն էր որ ըմբռնչուեցին այն ներկաները, որոնք տակաւին կ'ապրին մեր գրական արժէքներուն մեծութեամբն ու ներշնչումովը: Անոնք հասակ առած անոնց՝ Չօհրապի, Վարուժանի, Սիւսանայի, Սեւակի, Թլկատինցիի... գործերուն արժէքներովը տակաւին կը մնան ամբողջ կայուն արեւմտահայ այդ գրական աշխարհին հետ:

Մասնաճիւղի ատենապետին բացման խօսքէն ետք հրաւիրուեցաւ օրուան հանդիսավարութիւնը կատարել ԹՄՄԻ երկարամեայ հաւատարմոր անդամ, կրթական մշակ, գրող ու Նիւ Եորքի միա՛կ հայկական դպրոցին՝ Սրբոց Նահատակաց Ամենօրեայ Վարժարանին սիրուած տնօրէնուհին՝ Տիկին Չարմինէ Պօղոսեան: Ան ծանօթ գրական մեր աշխարհին, ծանօթ նաեւ յայտագրին մաս ու բաժին վերցուցած մտաւորականներուն եւ գեղարուեստական յայտագրին երիտասարդ արուեստագետներուն, ըստ սովորականին, լաւագոյնս կրցաւ կատարել իր պարտականութիւնը, իր գեղեցիկ մայրենիով ու երբեմն անգլերէն լեզուով համեմելով յայտագիրը:

Նախ ըսենք որ գեղարուեստական յայտագրին մաս կը կազմէին ԹՄՄ «Մեր Սկրտչեան» թատերախումբին շնորհիւ դերասաններէն՝ Յարութ Պարսունեան, Արփի Չանքար, Սրբուհի Վարդիվառեան եւ Դալար Չօքեան, որոնք անգլերէն ու հայերէն լեզուներով ընթերցեցին Վարուժանի գոհարներէն՝ քերթուածներէն քանի մը գործեր: Անոնք առինքնեցին իրենց կատարողութեամբ հանդիսականները:

Օրուան առաջին խօսք առնողը եղաւ այս համայնքին ծանօթ ու այժմ պոստոնաբնակ մտաւորական, ԹՄՄ Կեդրոնական Վարչութեան վարիչ քարտուղար Արամ Արթուն: Իր պաշտօնին կոչուելէն ի վեր պաշտօնական իր այս այցելութեամբ ան վեր առաւ Մեծագոյն Նիւ Եորքի մասնաճիւղի բազմաբեղուն ու մանաւանդ որակեալ մշակութային, գրական ու թատերական գործունեութիւնը՝ օրինակ ծառայելով այլ մասնաճիւղերուն թէ տեղական զանազան ազգային կազմակերպութիւններուն:

Արամ խօսք առաւ անգլերէն լեզուով ու անգիր կատարեց իր դասախօսութիւնը. նախ հորիզոնականը գծեց Վարուժանի կեանքին ու գործին միջեւ: Վարուժան (ծնած՝ Դանիել Չպուքեան, 1885ին նահատակուած՝ 1915-ին) կը նուիրուի

քերթողական գրականութեան: Բրքնիքի գաւակ (Սեբաստիոյ նահանգէն) փոքր տարիքէն ծանօթացաւ հայ մշակին ու անոր արտին, կային ու հունձքին: Ու իր գիւղին եւ ապա՝ Կ. Պոլսոյ մէջ հասակ առած ճաշակեց Համիտեան կոտորածներուն արհաւիրքը:

Ուսումնատեսչ ուսանող հայ կաթողիկէ ընտանիքին զաւակ, նախ մայրաքաղաքի Միսիթարեան վարժարանը կը յաճախէ ու ապա կ'անցնի Վենետիկի Մուրատ-Ռաֆայելեան վարժարանը, ուր կը ծանօթանայ եւրոպական ու դասական գրականութեան: Կը ներշնչուի իտալական արուեստի գործերով: Կը վայելէ իր ուսուցիչներուն համակրանքը եւ զինք բարձրագոյն կրթութեան համար կը դրկեն Պելճիքա ուսանելու: Տեղոյն, թէեւ բանուորական ու ճարտարարուեստական կեանքին, անձլաման մշակոյթին ու գրականութեան կը ծանօթանայ մօտիկէն:

Կը վերադառնայ ծննդավայր, 1909-ին, երբ արդէն Կիլիկեան (ծանօթ՝ Ատանայի) աղետը վրայ կը հասնի: Կը նուիրուի ուսուցչական ասպարէզին եւ կը դասուանուի Սեբաստիոյ եւ Եւրոկիոյ (Թոքաթ) մէջ, որոնցմէ ետք կը հաստատուի Կ. Պոլիս ուր կը նշանակուի հայկական վարժարանի մը տնօրէնը:

Կը հրատարակէ իր բանաստեղծութեան երեք հատորները՝ «Սարսուռներ» (1905-06), «Տեղին Չայնը» (1909), «Յեթանոս Երգեր» (1912) եւ յետ մահու կը հրատարակուի իր նշանաւոր «Յացին Երգը» (1921): Արթուն մէկ առ մէկ կը ծանօթացնէ այս գործերը, որոնք ունին ընկերային խորք որ իր քաղաքական ըմբռնողութեամբ իսկ Վարուժան այս գործերով երեւան կը հանէ ընկերային անարդարութիւններ ու կը շեշտաւորէ իր ընկերավարական համոզումները:

Ապրիլ 24, 1915-ին, տակաւին 31 տարեկան կը քալէ դէպի աքսոր, դէպի Այաշ ու կը նահատակուի, մնալով դասական ու անմահ մեր բանաստեղծը:

Սիրուած բանաստեղծուհի Վեհա-Նոյշ Թէթեան բեմ հրաւիրուեցաւ կարդալու Վարուժանին նուիրուած իր մէկ ստեղծագործութիւնը: Այս եղաւ անակնկալ մը, որ բերաւ յաւելելալ որակ օրուան այլապէս հարուստ յայտագրին:

Յաջորդ բանախօսը Դոկտ. Վարդան Մատթեոսեան, որ հասակ առած է Արժանիքի մէջ, սակայն իր հետաքրքրութիւնը դէպի հայկական մշակոյթ ու արժէքներ զինք կապած են ազգային կեանքին, հայ դպրոցին եւ հայեցի դաստիարակութեան: Նիւ Եորքի մտաւորական հայ շրջանակին յարգելի անդամներէն ան կը մնայ ու քաջալերողը՝ Թէթեանի գործունեութեան:

Կու տանք հատուածներ, հայերէնով իր պատրաստած լուրջ ուսումնասիրութեան. «Առաջին երեք գիրքերը բաւարար եղած էին Վարուժանը դարձնելու արեւմտահայ բանաստեղծութեան գագաթը: Ու հոն պիտի մնար առաւելտ, որովհետեւ իր սերունդով ու անոր վերապրողներով վերջացան արեւմտահայութիւնն ու արեւմտահայ գրականութիւնը, որուն պիտի յաջորդէին Սփիւռքն ու սփիւռքահայ գրականութիւնը, բոլորովին տարբեր միջա-



վայրի ու պայմաններու ծնունդ»:

«Կը մաղթեմ, որ այս ձեռնարկը առիթ մը հանդիսանայ, որպէսզի անոնք, որոնք մինչեւ հիմա միայն ունկնդիր եղած են, դառնան ընթերցող, իսկ ընթերցողները դառնան վերընթերցող»:

«Բանաստեղծութեան ազգակերտ դերին մասին, կարելի է փոխաբերական իմաստով կարդալ 1911-ին տպուած *Յայ լեզուի խնդիրը* յօդուածին հետեւեալ տողերուն ընդմէջէն. **լեզուն սկսաւ օտարանալ եւ ստրկանալ կարգ մը գրիչներու տակ, որոնք չունէին տաղանդը՝ գունէ զայն պահպանելու համար այն ձեւին մէջ, գոր իրենց յանձնէր էին Պ. Դուրեանի, Գ. Օտեանի եւ Յ. Պարոնեանի նման շքեղ գրագետներ ... բայց ո՛ր էր Գաւառը՝ ուր ժողովուրդի հոգւոյն ամբողջականութիւնը կ'ապրի, ո՛ր էր գաւառը հզօր, գունազեղ, իրապաշտ իր աշուղներուն հոյլերով:** Այն լեզուն որ իր ծոցէն հեռու կը սաղմնաւորէր, անշուշտ պիտի չկրնար արտայայտել այն մեծ իտեալները, այն վսեմ պատկերներու դիւցազներգութիւնները՝ որոնք իր մարդուն եւ իր հողին կը պատկանին: Այդ լեզուն իսկապէս չունեցաւ ժողովուրդի մը սրտին տիեզերական բաբախիւնները, թէպէտեւ, խոստովանինք, ան շատ յաջող, շատ ման-

**րագնին ուրուագծեց ջղայնութիւնը ենթակայական յոյզերու»:**

Դոկտ. Մատթեոսեան հակիրճ կերպով ներկայացուց Թէթեան-Վարուժան սիրալիր յարաբերութիւնները, հակառակ երկու մեծ քերթողներուն գաղափարական տարբերութիւններէն:

Նիւ Եորքի հայկական գրադարաններէն անկարելի եղաւ ապահովել Վարուժանի գիրքերէն՝ տրամադրելու ներկաներուն: Յեղասպանութեան դարադարձի այս օրերուն, եկեղեցւոյ մեր գոյգ գրախանութիւններէն կամ Բարեգործականէն ոչ մէկ գիրք հայ նահատակներէն կարելի եղաւ գտնել, ու ստիպուած ներկաներուն մէկական օրինակ տրամադրուեցաւ «Հանդիպումներ 1»-էն օրինակներ ուր լոյս տեսած էր հեղինակին ունեցած սիրուն ու սրտբաց տեսակցութիւնը վաղամեակ բանաստեղծին դատեր Վերոնիքային հետ, Նիւ Եորքի մէջ Գոնէ այդ նուիրով ներկաները պիտի պահէն մնայուն յիշատակ մը այս. երեկոյէն:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն պատրաստութեամբ՝ Թէթեանի վարչութեան տիկիններուն՝ Մարի Չօքեանի, Յելլեն Միսիթ եւ Տիանա Միսիթարեանի կողմէ: Ու առիթ եղաւ ներկաներուն ծանօթանալու օրուան հիւր բանախօսներուն:

## Գովելի Ժեսթ մը

Ինչպէս գիտնեք Ֆետերալ ընտրութիւններու թուականը կը մօտենայ շուտով: Ըստ նոր օրէնքներուն, կը նախատեսուի թէ անոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ Յոկտեմբեր ամսուայ ընթացքին:

Մինչ տարբեր շրջաններու մէջ զանազան գլխաւոր կուսակցութեան թեկնածուները, գրեթէ բոլորը, արդէն իսկ որոշուած են, Լիպերալ կուսակցութիւնը, Քարթիելի-Ահունդսիք շրջանի մէջ թեկնածուի ընտրութեան գործողութիւնը մինչեւ այսօր տակաւին կը ձգձգէ:

Հայաշատ այս շրջանին մէջ անհանգիստ երեւոյթ մըն էր մինչեւ այսօր, երկու կարող հայ ծագումով թեկնածուներ տեսնելու պարագան: Անցեալ շաբաթ, տեղեկացանք թէ անոնցմէ մէկը Պրն. Նորայր Սերենկիւլեան յայտարարած է թէ ինք իր անունը կը քաջէ ցանկէն: Գովելի Ժեսթ մը պէտք է նկատել Պրն. Սերենկիւլեանի այս քայլը, քանի որ այսպիսով այդ շրջանի հայազգի ընտրողներուն համար աւելի հեշտ պիտի ըլլայ հանգիստ կերպով թուէները կեդրոնացնել, ի նպաստ այդ շրջանի միւս եւ միակ հայ թեկնածու պրն. Վիգէն Աթարեանին:

# Նախագահ Սարգսյան Ներկայ գտնուած է «Վիքիմետիա Հայաստան» գրասենեակի բացման եւ այցելած՝ «Միր» հեռուստաընկերութիւն



Նախագահ Սերժ Սարգսյան Ուրբաթ՝ 19 Յունիս 2015-ին, Ներկայ գտնուած է «Վիքիմետիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպութեան գրասենեակի բացումին:

ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ ՀՀ Նախագահը այցելած է գրասենեակ, ծանօթացած է «Վիքիմետիա Հայաստան»-ի գործունեութեան եւ յառաջիկայ ծրագիրներուն:

Նախագահին Ներկայացուցած են, որ որպէս «Վիքիմետիա» հիմնադրամի հայաստանեան մասնաճիւղ հիմնադրուած «Վիքիմետիա Հայաստան»-ի նպատակն է՝ խթանել վիքի նախագիծերու տարածումը եւ զարգացումը Հայաստանի ու տարածաշրջանի մէջ, հանրայնացնել ազատ գիտելիքի գաղափարը:

Գրասենեակի ժողովասրահին մէջ Սերժ Սարգսյան մասնակցած է Հայաստանի մէջ վիքի նախագիծերու զարգացման վերաբերող հարցերու քննարկման, որուն մասնակցած են նաեւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը, ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանը, «Ինթելեկթուալ Ռեսուրս» հիմնադրամի տնօրէն Յակոբ Յակոբեանը, հիմնադիր Արթուր Զանիբեկեանը, «Վիքիմետիա Հայաստան» ՀՀ նախագահ Սուսաննա Մկրտչեանը, «Վիքիմետիա» հիմնադրամի խորհուրդի նախագահ Եան Պարթ տէ Վրիտը, հիմնադրամի կրանտներու բաժնի եւ միջազգային հիւսիսային համագործակցութեան ղեկավար Ասաֆ Պարտովը, «Վիքիմետիա» կրթական ծրագրի ղեկավար Աննա Կովա-

լը, «Եւրոպեանա Գլամ» վիքի ծրագրի համակարգող Ուիլիլմ Վիաթը, «Ինթելեկթուալ Վերածնունդ» հիմնադրամի տնօրէն Մարինա Սուլթանեանը եւ ծրագիրներու համակարգող Արմէն Մարտիրոսեանը:

«Վիքիմետիա Հայաստան» կազմակերպութեան գրասենեակի բացման արարողութեան ծիրէն ներս մասնակիցները դիտած են նաեւ «Ինթելեկթուալ Ռեսուրս» հիմնադրամի եւ «Վիքիմետիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպութեան համագործակցութեան արդիւնքները Ներկայացնող տեսանիւթ:

Հանրապետութեան նախագահը «Վիքիմետիա Հայաստան»-ի գրասենեակէն ետք այցելած է «Միր» միջպետական հեռուստառատիօ ընկերութեան ազգային մասնաճիւղ, որուն. Յունիս 18-ին ՀՀ կառավարութեան որոշմամբ յատկացուած է 60 միլիոն դրամ՝ Երեւանի մէջ տեղակայուած երկրային արբանեակային կայանի վերազինման համար:

Սերժ Սարգսյան շրջայցի ժամանակ ծանօթացած է ընկերութեան տեխնիկական հնարաւորութիւններուն, վերազինման ընթացքին եւ այդ ուղղութեամբ յառաջիկայ ընելիքներուն, զրուցած՝ մասնաճիւղի աշխատակիցներուն հետ: Նախագահին Ներկայացուած են «Միր» հեռուստառատիօ ընկերութեան ազգային մասնաճիւղի կողմէ պատրաստուող արտադրանքը, նոյն ծաւալները, ստեղծագործական խումբի կողմէ պատրաստուող հաղորդումները, որոնք Հայաստանը կը ներկայացնեն մօտ 162 միլիոն դիտող ունեցող «Միր»-ի լսարանին:

# Նախարար Յակոբեան Մարտելի մէջ մասնակցած է շարք մը ձեռնարկներու

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ «Մարտել-Փրովանս-Հայաստան-2015» միութեան հետ համատեղ Մարտելի մէջ «Հայաստանի տարի» ծրագրի ծիրէն ներս իրականացուող ձեռնարկներուն մասնակցելու նպատակով՝ Յունիս 19-22 Մարտել այցելած է ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան: Այս մասին կը հաղորդէ ՀՀ սփիւռքի նախարարութեան մամուլի գրասենեակը:

Յունիս 19-ին ՀՀ սփիւռքի նախարարը Ֆրանսայի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Վիգէն Զիթեչեանի ուղեկցութեամբ հանդիպած է Պոլշ տիւ Ռոնի մարզպետ տիկին Մարտին Վասալի հետ: Չրոյցի ընթացքին քննարկուած են մարզի հայութեան եւ հայ-ֆրանսական բարեկամական կապերու զարգացման հետ կապուած հարցեր: Տիկին Վասալին հպարտութեամբ նշած է իր հայկական արմատներուն մասին:

Նոյն օրը նախարարը մասնակցած է Սարգիս Գրիգորեանի նկարներու «Ծիրանի ծաղիկ» խորհրդանշական խորագիրով ցուցահանդեսին, ապա Ներկայ գտնուած է «Կոմիտաս» բառեակի (ղեկավար՝ Ալէն Պապուշեան) Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած համերգին, որուն մասնակցած են հայ եւ օտար երաժիշտներ:

Յունիս 20-ին Հ. Յակոբեան մասնակցած է Հայ Երիտասարդաց միութեան (ԺԱՖ) երգի եւ պարի խումբերու տարեկան համերգին: Համերգի



աւարտին՝ նախարարը ԺԱՖ-ի պարախումբի գեղարուեստական ղեկավար Մարիոն Շամասեան եւ Ժաֆ-երգչախումբի ղեկավար Միքայէլ Վեմեան պարգևատրուած է ՀՀ սփիւռքի նախարարութեան «Կոմիտաս» մետալով:

Նոյն օրը նախարարը մասնակցած «Մարտելի հայ մշակոյթի եւ երիտասարդութեան տան» տարեկան ճաշկերոյթին, որմէ զոյացած հասոյթը պիտի տրամադրուի կազմակերպութեան կողմէ իրականացուող հայանպաստ ծրագիրներուն:

Կիրակի՝ Յունիս 21-ին, նախարար Հ. Յակոբեան այցելած է Մարտելի Հայ Աւետարանչական եկեղեցի, այնուհետեւ, մասնակցած է Պոմոն թաղամասի Հայ Առաքելական եկեղեցւոյ կիրակնօրեայ պատարագի արարողութեան, որմէ յետոյ, տեղի ունեցած է ծաղկեպսակի զետեղման արարողութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած յուշարձանին մօտ: Ձեռնարկին մասնակցած են Ֆրանսայի ԱԺ պատգամաւորներ, Մարտելի փոխքաղաքապետ Վալերի Պուայեն, Պոլշ տիւ Ռոնի մարզպետ Մարտին Վասալին, թաղապետեր, հայկական համայնքային կառոյցներու ղեկավարներ եւ գործիչներ:

Մարտելի մէջ գտնուելու օրերուն նախարար Հրանոյշ Յակոբեան հանդիպումներ ունեցած է հայ համայնքի ներկայացուցիչներուն եւ հայկական կազմակերպութիւններուն հետ, մասնակցած ՀԲԸՄ տարեկան ճաշկերոյթին, այցելած «Համազգային»ի վարժարան եւ ՀՅԴ ակումբ:

Մարտելահայ համայնքի խումբ մը աշխոյժ եւ նուիրեալ անձիք պարգևատրուած են նախարարութեան մետալներով, պատուագրերով եւ շնորհակալագրերով:

Մարտելեան ձեռնարկներու աւարտին նախարար Հրանոյշ Յակոբեան Ներկայ գտնուած է Լուիս Եսայեանի «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» կարգախօսով բարեգործական համերգին:

Համերգին Ներկայ եղած են նաեւ Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան Վիգէն Զիթեչեան, Մարտելի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս Վարդան Սրմաթեշ, Մարտելի քաղաքային իշխանութիւններու ներկայացուցիչներ, 4000-է աւելի մարտելահայ եւ ֆրանսացի ունկնդիրներ:

# Գերմանիոյ 12 քաղաքներու քաղաքապետները այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

Գերմանիոյ Հեսսենի երկրամասին մէջ ՀՀ պատուաւոր հիւպատոս Պրայան Սթիվըն Ֆերայի նախաձեռնութեամբ եւ զխաւորութեամբ՝ Երեւան ժամանած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան 12 քաղաքներու քաղաքապետներէ կազմուած ֆուլպօլի հաւաքականը, որ ընկերական հան-

դիպում պիտի ունենայ Երեւանի քաղաքապետարանի խումբին հետ:

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ Երեւանի քաղաքապետի տեղակալ Դաւիթ Օհանեանի



# ABAKA

SECTION FRANÇAISE

Երեւանի պատմութեան ծանօթանալու, տեսարժան վայրերը կարճ ժամանակի մէջ տեսնելու համար զբօսաշրջիկներուն առանձին կ'առաջարկուի նաեւ այցելութեան 12 վայր՝ Երեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, Երեւանի քաղաքի պատմութեան թանգարան, Մատենադարան, Վերնիսաժ, «Երեւան Սիթի Թուր» զբօսաշրջային երթուղին, զբօսանք Կասկատի վրայ, Հիւսիսային պողոտայ:

Քարտեզին մէջ նշուած են նաեւ Երեւանի մեթրօփոլիտէնի կայարանները, կեդրոնի հեծանուային կանգառները: Առանձին՝ օգտակար տեղեկատրուութիւն սիւնակով ներկայացուած են շտապ բուժօգնութեան, ոստիկանութեան եւ այլ ծառայութիւններու հեռախօսահամարները, կայքերը:

# Ռուսաստանաբնակ շուրջ 200 ընտանիքներ մեքենաներով մեկնած են Արցախ



Յունիս 20-ին Վարդենիս-Քարվաճառ մայրուղիով Արցախ ժամանած են հիմնականօրէն ռուսաստանաբնակ շուրջ 200 ընտանիքներ՝ «Արցախ» հայրենակցական միութեան նախագահ Վարուժան Գրիգորեանի գլխավորութեամբ, կը հաղորդէ Artsakhpress.am-ը:

Հայրենի երկրամասին մէջ իրենց ամառնային հանգիստը կազմակերպելու նպատակով մեքենաներու երթով Արցախ ժամանածներուն Քարվաճառի մատոյցներուն վրայ դիմաւորած է ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարութիւնեանը: Հանդիսաւոր ձեռնարկին մասնակցած են նաեւ արցախեան երիտասարդական կառոյցներու ներկայացուցիչներ:

Երիտասարդները հայրենադարձ արցախցիները դիմաւորած են աղ ու հացով, պաստառներով ու ծափողջիւններով:

ԼՂՀ վարչապետը նշած է, որ այդ նախաձեռնութիւնը մեծ նշանակութիւն ունի Արցախի ու Արցախէն դուրս ապրող ծագումով արցախցիներու համար: «Նախ սա հնարաւորութիւն է տալիս իւրաքանչիւր արցախցու գոնէ տարին մէկ անգամ լինել Արցախում եւ ապրել իր հայրենակիցների հետ: Կապէ՛ք ձեր երեխաներին ու թոռներին ձեր հայրենիքի հետ, որպէսզի նրանք չկորցնեն իրենց ինքնութիւնը, այդպէս նաեւ մեծապէս կ'աջակցէք Արցախի շէնսցմանը», - ըսած է վարչապետը:

«Արցախ» հայրենակցական միութեան նախագահ Վարուժան Գրիգորեանը ըսած է, որ իրենց նախաձեռնութիւնը շարունակական պիտի ըլլայ. «Իսկապէս, սա մեծ հայրենասիրական քայլ է, եւ կարծում եմ՝ ամէն մի հայ պետք է գոնէ մէկշաբաթեայ հանգիստ անցկացնի իր հայրենի հողում»: Կոչը, ըստ Գրիգորեանի, չորս միտում ունի՝ հայրենասիրութիւն, տնտեսական աճ, վերաբնակեցում՝ հայրենադարձութիւն եւ անվտանգութեան խնդիրներու ապահովում:

«Ես Մարտակերտի շրջանի Չափար գիւղից եմ: «Արցախ» հայրենակցական միութեան կոչին նաեւ մեր ընտանիքն է արձագանգել: Մենք ժամանել ենք Ռոստով քաղաքից: Ամէն տարի մեկամսեայ հանգիստ ենք ունենում մեր հայրենիքում, մեր սրտերը հանգստացնում, կարօտը առնում հայրենի հողից», - ըսած է նախաձեռնութեան մասնակից Կարինէ Դանիելեանը: Անոնք արդէն 24 տարի է, որ արցախ չեն ապրիր:

# Սասունի հայկական Ար. Պետրոս վանական համալիրը կը նախատեսուի վերանորոգել

Թուրքիոյ Պաթման նահանգի Սասուն գաւառին մէջ գտնուող 1500-ամեայ հայկական Ար. Պետրոս վանական համալիրը պետականօրէն արձանագրուած է:

Ըստ ermenihaber.am-ի՝ թրքական «Haberler» լրատուամիջոցը կը յայտնէ, որ արձանագրութիւնը իրականացուած է Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան Տիարպէթի մշակոյթի եւ բնական ժառանգութեան պահպանման տարածքային կեդրոնին կողմէ: Տարածքը զբօսաշրջութեան առումով անլի գրաւիչ դարձնելու նպատակով որոշում կայացուած է վերականգնել եկեղեցին եւ յարակից հայկական գերեզմանները:

350 սենեակէ բաղկացած եկեղեցական համալիրը վերջին շրջանին տեղաբնակներու կողմէ որպէս ախոռ կ'օգտագործուէր: Կառոյցի ներսը լեցուած էր աղբով:

Վանական համալիրի համար տարիներ շարունակ պայքար մղող Սասունի, Պիթլիսի, Մուշի, Վանի եւ Իսթանպուլի հայերու ընկերային օգնութեան, համերաշխութեան մշակութային միութեան ղեկավար Ազիզ Տաղջըն յայտարարած է.

«Մենք պիտի շարունակենք պայքարը հայերուն պատկանող պատմական եկեղեցւոյ, վանական համալիրի եւ բոլոր յարակից կառոյցներուն համար»:

Հետաքրքրական է, սակայն, որ Սասունի Մեշէլի (Քոմք) գիւղին մէջ գտնուող պատմական համալիրը արձանագրուած է Չայրըր գիւղին վրայ, որ յառաջացուցած է հայերու



վրդովումը: Ըստ Ազիզ Տաղջընի՝ պատմական բոլոր աղբիւրներուն մէջ կը նշուի, որ Ար. Պետրոս Առաքելի եկեղեցին ու վանական համալիրը կը գտնուին Քոմք, այսինքն

Մեշէլի գիւղի տարածքին մէջ: Ան նաեւ տեղեկացուցած է, որ իրենք պիտի սկսին համապատասխան իրաւական գործընթացք՝ այդ սխալը ուղղելու համար:

# «Պիտի գան, պիտի երթանք... Կելիճիլեր, կետիճիք...»

## Չմրուխտ ՆԵՆԷՆ ԵՆ Այնթապի թափուրները-փաստաթուղթերը

Հալեպի չոր ու տաք ամրան օրերեն մին էր: Տնեցիները ամեն մեկը իր գործով դուրս ելած էին: Մարի-Մաման-Կեսուր մայրս- օր- ան ճաշին վերաբերեալ գնումներ կատարելու համար ելած էր: Երկրորդ յարկի վրայ ապրող մեր երեց- կին քեռկինը «չիրքեթի» գացած էր ինծի կարգ մը ապսպրանքներ կատարելու տոք, թե՛ «Նենեն մինակ է, աչքդ վրան պահե...»:

«Նենեն» ամուսնոյս մօրենական մեծ մայրն էր, Այնթապէն գաղթական հասած Հալեպ, ճամբուն վրայ 1916-ի ծնունդ Մարի Մամային Պերիճիկի մօտերը, ծառի մը տակ, ափ մը ջուրով, հապճեպ կնքելու տեղ- որպէսզի յանկարծ եթէ «բան մը» պատահի գաղթականութեան ճամբուն վրայ եւ անմեղ մանուկը մեռնի- անդենական հասնի մկրտուած եւ արթալութեան ներկայանայ որպէս հայ՝ եւ քրիստոնէսայ՝:

Անշուշտ, փառք տիրոջ, Մարի Մաման ողջ մնացածներէն էր: Ողջ մնացած էր նաեւ 6-7 տարեկան Նիկոտէն գաղթական որբուկ Կիրակոս Մավլեան-Պողոսեանը: Ի՛նչ բախտաւոր գուգադիպութեամբ գաղթականութեան ճամբուն վրայ շուրթած տղեքին իրենց համաբաղաբացի մեկը կը ճանչնայ որպէս «Նիկոտէնի Սաաթի Օվանէս Պողոսեանին քրոջը տղան» եւ ձեռքէն բռնած կը հասցնէ Սաաթի- ժամագործ Օվանէսին կարաւանին: Որբուկ Կիրակոսը վստահ չէր կրնար յիշել թէ քանի՞ եղբայր, քանի քոյր ուներ: Ուրախ էր որ քեռին զինք գրանցած էր իր ընտանիքին եւ դարձուցած Պողոսեան, յաւերժ կորսնցուցած ըլլալով իր ընտանիքի բոլոր անդամներուն հետ նաեւ ընտանեկան Մավլեան մականունը: Ահաւասիկ Նիկոտէն Հալեպ հասած այդ որբուկը, քեռիին պէս ժամագործ դարձած, եւ ծառի տակ մկրտուած հայ քրիստոնէայ աղջնակը Այնթապէն- երկու տարբեր քաղաքներէ գաղթական- Հալեպ հասած էին երիտասարդներ դարձած՝ կ'ամուսնանան ծնունդ տալով չորս դուստրերու եւ մեկ մանչ գաւակի որուն «հարսն» էի եւ 60-ականներու վերջը...:

Օրերը փոխուած էին: Մեր սերունդին համար հեքեաթային դըր- ւագներ էին գաղթականութեան օրերու ապրումները: Հալեպ քաղաքին Սեպիլի վրաններէն, Կիրիս- ցիներու Քեմբէն, Չեյթունցիներու Խանէն, թիթեղածածկ տուններէն հայ ընտանիքներ քարաշէն տուններ պատելու տուած էին, շէնքերու կամ անձնական տուններու մէջ կ'ապրէին հիմա, եւ ծառին տակ մկրտուող աղջնակը՝ կեսուր մայրս էր, որ այդ օր ի՛ր ալ շէրքեթի օրն էր, պիտի երթար իր գնումներէն տոք:

Շիրքեթը խմբակցութիւն մըն էր կիններու, նոյն ձեւով ալ երեկոյեան տղամարդիկ կը հաւաքուէին միեւ- նոյն նպատակով- ժամանց եւ խնայողութիւն: Այս առիթներով կինե- րուն նիւթ ճաշատեսակներու փոխանակումէն տոք կը դառնար թաղի- ղին յարմարագոյն թեկնածուները ամուսնացնելու, խնամախօսու- թեան կամ նշանտուրի ձեւերը խճճե- լու, տունի կահ կարասիներու փոփոխութիւնները ընելու եւ այլն...:

Իսկ տղամարդիկ իրենց յատուկ խօսակցութեան կողքին «Պլօթ կամ փօթեր խաղալու» թղթախաղի հա- ճոյքը կը վայելէին: Այս հանդիպում-

ները շաբաթը անգամ մը կը պատահէին կարգով, իւրաքանչիւր շաբաթ մէկ անդամին տունը:

Երկու պարագային ալ գլխաւոր՝ նպատակը դրամահաւաքն էր խնա-



յողութեան, հեռանկարով: Դրամատուններու չգոյութեան խնայասեր հայ տանտիրիկները այս ձեւը ընտրած էին ամեն շաբաթ իրենց շաբաթական ծախսերու գումարէն որոշ բաժին մը մեկդի դնելով, խումբին գանձապահին տալով տարեվերջի հաշուեփակին կոկիկ գումար մը ձեռք կարենալ անցնելու համար: Եթէ խումբի անդամներէն մեկն ու մեկը տարւոյն ընթացքին որոշ գումարի պէտք ունենար իրաւունք ուներ մեջ-ընդ-մեջ փոխ առնելու- տոկոս վճարելու պայմանով- եւ մինչեւ փոխ առած գումարը վերադարձնելը ամսական տոկոս կու տար, տարեվերջին տոկոսներէն հաւաքուած գումարը հաւասարապէս անդամներուն կը բաժնուէր:

«Նոր հարս» ըլլալով հլու հնազանդ տունը մնալու շրջանս էր: Պարտականութի՞ւնս, չորս կողմը հաւաքել, Հալեպի անվերջանալի փոշիներէն փոշոտած կարասիներուն «փոշին առնել» տունը կարգապահ պահել, եկող հիւրին սուրճ հրամցել: Հեռածայնի չգոյութեան կազմ պատրաստ պէտք էր ըլլալ՝ կոկիկ հագուած, տունը մաքուր, սուրճը պատրաստ ըլլալու էր: Ունէ տուեալ պահուն կարելի էր մեկն ու մեկը դուռը գարներ եւ սուրճ խմելու համար ներս մտնել: Կը յիշեմ օրեր կային որ սուրճի բաժակները պահարանի հանգիստը չէին տեսնել: Հազիւ խումբ մը ճամբու դրած՝ գաւաթները կը լուսցուէին եւ կրկին ափսէին կը շարուէին յաջորդ եկուորը հիւրասիրելու:

Այնթապէն գաղթական Հալեպ հասած Մարի Մամային մայրը Չմրուխտ ՆԵՆԷՆ՝ յիշողութիւնը կոր- ցնուցած էր այլեւ: Հսկողութիւն կ'ուզէր: Ո՛ր էին այն օրերը երբ ինք քսանէ աւելի դեռատի աղջիկներուն, հարսերուն վերահսկիչն էր: Ա՛լ բան չէր մնացած այդ չարքաշ եւ գործունէայ կնոջմէն: 20-ականներու սկիզբը Հալեպ հասնելէն տոք կորովի ձեռներեցութեամբ մը Չմրուխտ Խանըմը գործի մղուած էր իր հետ համախմբելով խումբ մը հայ երիտասարդ մայրեր: Այնպիսի մեկն էր որ ի՛նք կը հսկէր քսանէ աւելի իրական սեռի այդ աշխատաւոր- ներուն, որոնք «Քերկահին» առջեւ նստած Այնթապի գործ կ'աշխատէին, որպէսզի Չմրուխտ Խանըմը իր կապերուն միջոցաւ ամերիկացի միսիոնարներուն ղրկէր եւ ամերիկայի մէջ ծախուելէն տոք տոլար ստանար՝ թէ՛ իր ընտանիքին եւ թէ

այդ ընտանիքներուն օրապահիկ ապահովելով:

Այս օրերուն նման գործնական իրական սեռի ներկայացուցիչ մը կը պիտակաւորուի որպէս իսկական առեւտրական մտածողութեամբ անձնաւորութիւն մը. «Պիզնես մայս- տրտ Կումըն»:

Հալեպէան օրեր... վերապրողներու սերունդը... կիզիչ աւազներէն, վրաններու խլեակներէն, թիթեղա- ծածկ սենեակներէն, տարուէ տարի, տասնամեակ տասնամեակ սկսան քարաշէն տուններու մէջ ապրիլ, բարձրագոյն ուսման հետեւող գա-



ւակներ ունենալ, հայ դպրոցները նախակրթարաններէն երկրորդա- կան վարժարաններու դռներ բաց- ւեցան, թատրոն, երգահանդես- ներ, ամառնային ակումբային պար- տէզներու ելոյթներ կազմակերպել սկսան...:

Ա՛յս էր կեանքը 60-70-ական- ներուն մեր Երագային Հալեպին մէջ քանի մը տասնեակ նախակրթարաններով, երեք գլխաւոր երկրորդական վարժարաններով, եկեղեցի- ներով, հայրենակցական եւ կուսակ- ցական ակումբներով, Սարեան Արուեստի դպրոցով, հայո՛ւ անուն կրող հիւանդանոցով...:

Պարտականութիւնս չէի մոռցած: Չմրուխտ ՆԵՆԷՆի աչք պահելու համար մեկ վերի յարկ կը վագէի, տեսնելու որ ի՛նչ գործի վրայ է Նե- նեն, կրկին վարի յարկը գործիս վերադառնալու:

Երեւի կէս ժամ անց էր ծայն մը լսեցի վերէն եւ աճապարանօք վեր վագեցի: Ի՛նչ տեսնեմ:

Չմրուխտ ՆԵՆԷՆ իր դարակը պարպած էր, ճերմակեղէնները «ՊՕԽԵԱ» ըրած՝ ծրարած էր սա- ւանի մը մէջ չորս անկիւնները իրար հանգուցելով, գլխուն գլխաշորը- եզաման-ճիշդ հին օրերու ձեւով կզակին տակ կապած նստած էր իր ծրարին մօտ վախուորած-սառած աչքերը սեւեռած դուռին:

Իմ բացակայութեանս եւ թրքե- րէնով հարցիս վրայ թէ:

Նենէ ի՛նչ ըրիր- ո՞ր կ'երթաս...:

Չգուշացնող ցած ծայնով մը, մա- տը շուրթերուն դրած, թրքերէնով անշուշտ պատասխանեց,

Սո՛ւս կելի՛ն կելիճիլեր... կետիճիք- լու կեցիր հա՛րս, պիտի գան պիտի երթանք...:

Չորս կողմի թափօփած վիճակէն, պարպուած դարակներէն դուրս մնացածները հաւաքել փորձեցի, ի՛նչ տեսնեմ գետնին վրայ կտոր- կտոր դարձած փռուած էին պաշտօ- նական փաստաթուղթերու խունա- ցած-դեղնած ծուկները, բզիկ-բզիկ եղած ամբողջ անցեալի մը իրա-

ւունքի՛ն փաստերը:

Նենէ ի՛նչ են ասոնք, ի՛նչ պատ- ներ ես, ինչո՞ւ պատուեր ես...:

Հիստորիք խնդուք մը արձակեց... միշտ շատ լուրջ եւ խիստ մամա-մեծ մամա հանգամանքով այս կնոջմէն նման խնդուք բնաւ չէի տեսած:

«Այնթապըն Էվլերիմիզին թափու- լարը... քիմէ՞ տարար եավրում-Այն- թապի մեր տան պաշտօնական փաստաթուղթերն են: Որո՞ւն է պետք... ո՞վ է մեզի տուն տուող...: Ահա կինէ այնքան... կելիճիլեր, կե- տիճիք, պետէ պիլմիբմ ներիյէ... Ահա նորէն պիտի գան- պիտի եր- թանք... ես ալ չեմ գիտեր ո՞ր...»:

Նենէ՛, տե՛ղ մըն ալ պիտի չեր- թանք... հոս Հալե՛պ է, բո՛ւ տունդ է, քու քահանայ տղուդ տունն էս, ամեն ինչ ապահով է հոս, հայերուն լաւ աչքով կը նային, մեզի մեր տուններէն վնասող կամ տեղահան ընող չկայ...:

Լուռ նայեցաւ ինծի, գլուխը շարժեց... եւ տխուր աչքերը հեռուն պահած ըսաւ...:

Կելին սեն հի՛չ պիրշէտեն խա- պարըն եօթ տըր... կելիճիլեր, կե- տիճիք, սեվքիեթ տըր եավրում... հարս դու բան մը լուր չունիս... պի- տի գան... պիտի տանին մեզի, տեղահանութիւն է գաւակս...:

Հարիւր տարի տոք այսօր երբ կը խօսինք պաշտօնական արտօնագ- րերու, փաստաթուղթեր գտնելու, թափուներու մասին, քառասուն տարի առաջուայ պատահած այս դեպքը, Չմրուխտ ՆԵՆԷՆ աչքիս առաջ կու գայ իր պօխճայով, եագ- մայով եւ մանրուած թուղթի կտոր- ները գետնին, որ 100 տարի առաջ Այնթապի իրենց տաքուն բոյնիս օրինական փաստաթուղթերն էին...:

Այսօր Հալեպի իր եւ իր բոլոր հարագատներուն գերեզմանն ան- գամ ոտնակոխուած է... ո՞վքեր կան հոն թաղուած... Յակոբ Օշական, Համբարձում Էֆէնտի Պերպերեան, քահանաներու, հոգեւոր հայրերու համար կառուցուած յատուկ դամ- բարանը- հապա՞ Այնթապի ինք- նապաշտպանութեան յուշարձա՞նը, ուր ամեն Ապրիլ Մէլիկ կը նշուող 1 Ապրիլ 1920-ին Այնթապի հերոսա- մարտը, հսկայ թափօրով ծաղկե- պսակ կը գետեղուէր Ատուր Լեւոն- եան, Աւետիս Գալեմբերեան, Արժ. Տեր Ներսէս քիւյ. Թաւուքճեանի նման ինքնապաշտպանութեան հե- րոս դէկավարներու անունը կրող դամբարանին:

Այո՛, հիմա միեւնոյն հոգեվի- ճակները կ'ապրին մեր հարագատ- ները հոն Հալեպի մէջ: Չմրուխտ ՆԵՆԷՆ եւ իր քահանայ գաւակն գե- րեզմաններուն այցելութիւնն ան- գամ վտանգուած է: Ի՛նչ-ինչ երի- տասարդներ կը գոհուին անորոշ փոսերու մէջ թաղուելով:

Իսկ այն եկեղեցին, որ իր քա- հանայ տղան քառասուն տարի ծառայեց, հարիւրաւոր մանուկներ մկրտեց, քանի-քանի տասնեակ երիտասարդներու ամուսնութիւնը օրինեց՝ հրոյ ճարակ դարձած է եւ անգործածելի՛ այսօր՝ 2015-ին:

Կելիճիլեր, կետիճիք...:

Հիմա ո՞ր երթայ հալեպահա- յուլութիւնը երբ նոյն խորշակը մուտք գործած է հո՛ւն, որ հիւրընկալ արաբ երկիրն էր ժամանակին 1915-ի Ցե- դասպանութենէն վերապրողներուն համար:

**ՉԱՐՄԻՆԷ Գ. ՊՕՂՈՍԵԱՆ**  
Նիւ Եորք

# Սուրիոյ մէջ հայ երիտասարդ մը նահատակուած է

Սուրիոյ հիւսիսային շրջանի՝ Զահիչէի մէջ տեղի ունեցած ճակատամարտերու ընթացքին, նահատակուած է հայ երիտասարդ մը՝ Արսէն Պետրոսեան, որ մաս կը կազմէր Սուրիոյ ազգային պաշտպանութեան ուժերուն:



# Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը Մայր Աթոռի մէջ ներկայ գտնուեցաւ Գըրգ Գըրգորեանի հոգեհանգստեան արարողութեան



Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ մատուցուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ ի յիշատակ ամերիկահայ գործարար Գըրգ Գըրգորեանի: «Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ արարողութեան ներկայ էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան, Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեան, վարչապետ Յովիկ Աբրահամեան, նախարարներ եւ պատգամաւորներ, նաեւ հաւատաւոր ժողովուրդը:

Վարչապետը լրագրողներուն հետ զրոյցի ընթացքին նշած է, որ Գըրգ Գըրգորեանի նման հայորդիներ ունենալու համար պէտք է բոլորը իրենց երեխաներուն մէջ հայրենասիրութեան արժէքը սերմանեն: «Պէտք է ամեն ինչ անենք, որ էլի ունենանք նման մարդիկ՝ միասին դաստիարակելով, ինչը մեծ ներդրում կարող է լինել հայ ժողովրդի, Հայաստանի համար», ըսած է վարչապետը:

Աժ նախագահ Գալուստ Սահակեանի խօսքով՝ երբ կը մեծարես մեծերդ, կը մեծարուիս եւ դուն, եւ ազգդ: «Շատ կարեւոր է, որ մենք մեծարման ճանապարհով ենք գնում: Այսինքն՝ եթէ ընդօրինակման գաղափարախօսութիւնն առաջ չգնայ, բնականաբար, ամբողջ ազգը կը տուժի: Բայց երբ մեծարում ես մեծերիդ, մեծարում ես եւ դու, եւ ազգդ եւ կարողանում ես յաւերժութեան գաղափարախօսութեամբ առաջ ընթանալ», - ըսած է Գալուստ Սահակեան՝ անելցնելով, որ Գըրգ Գըրգորեանի համեստութիւնը պէտք է ուսանելի ըլլայ բոլորին համար եւ ամէն օր:

98 տարեկանին կեանքէն հեռացած է ամերիկահայ գործարար, միլիառատեր, բարերար Գըրգ Գըրգորեանը: Մահուան բօքը հաստատած է Գըրգորեանի «Թրասիտա Քորփորէյշն»-ի նախագահ եւ գործադիր տնօրէն Էնթընի Մանտէկիքը: Գըրգորեան մահացած է Երկուշաբթի երեկոյեան՝ Պեվերի Զիլլզի իր տան մէջ: Գըրգ Գըրգորեան ծնած է 1917-ի Յունիս 6-ին Ֆրեզնօ քաղաքին մէջ: Չբաղած է հիւրանոցային շինարարութեամբ, կինօ եւ մեքենաներու արտադրութեամբ: Սպիտակի երկրաշարժէն ետք եւ ՀՀ շրջափակման ու տնտեսական ճգնաժամի տարիներուն «Հայաստան» համահայկական հիմնադրամի տարբեր ծրագիրներուն նուիրաբերած է անելի քան 20 միլիոն տոլար: 1996-ին կրկնապատկած է Լոս Անճելըսի հեռուստամարաթօնի ընթացքին հաւաքած գումարը՝ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի շինարարութեան յատկացնելով մօտ 4 միլիոն տոլար: 2001-էն անոր «Լինսի» հիմնադրամը 200 միլիոն տոլար արժողութեան ծրագիրներ իրականացուցած Հայաստանի ճանապարհներու վերակառուցման, մշակութային հաստատութիւններու նորոգման, աղետի գօտիի վերականգնման ուղղութեամբ: Հայաստանի Ազգային հերոս է: Պարգեւատրուած է «Հայրենիք» շքանշանով:

# ՆԱԹՕ-ն կ'աջակցի ԵԱՀԿ Մինսքի խումբին

ՆԱԹՕ-ն որբէլ յստակ դեր չէ ստանձնած ԼՂ հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ, սակայն ընդունելով կողմերուն համար անվտանգութեան առաջնահերթութիւնը՝ ՆԱԹՕ-ի դիրքորոշումը կը շարունակէ մնալ անփոփոխ: Հիւսիսատլանտեան դաշինքը կը շարունակէ աջակցիլ ԵԱՀԿ Մինսքի խումբին: «Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի Rose Roth սեմինարի ժամանակ նման դիրքորոշում յայտնեց ՆԱԹՕ-ի կեդրոնակայանի Եւրոատլանտեան ընդելուզման եւ գործընկերութեան գծով աւագ փորձագետ Շթեֆան Էլկերսման:



«ԵԱՀԿ Մինսքի խումբը ունի օգտակար դերակատարութիւն ԼՂ հակամարտութեան կարգաւորման համար», - ըսած է ան: Էլկերսմայի խօսքերով, ՆԱԹՕ-ն Հարաւային Կովկասի պետութիւններու հետ ունի համագործակցութիւն, որ յենուած է չորս սիւնի վրայ՝ երկիրներու աջակցութիւն, կրթական բարեփոխումներու իրականացում պաշտպանական ոլորտին, հաշուետուողականութիւն եւ թափանցիկութիւն եւ ի հարկէ դիւանագիտութիւն», - ըսած է Էլկերսման:

Թեպէտ համագործակցութիւնը երեք երկիրներու հետ տարբեր մակարդակներու վրայ է, սակայն փորձագետը յոյս յայտնեց, որ ՆԱԹՕ-ի եւ Հարաւային Կովկասի երկիրներու միջեւ պիտի շարունակուին գործընկերային յարաբերութիւնները առանց դանդաղելու:

Երեւանի մէջ ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի եւ ՀՀ Աժ համագործակցութեամբ՝ Յունիս 18-20-ին տեղի ունեցաւ «Անվտանգութիւնն ու կայունութիւնը Հարաւային Կովկասի մէջ. տեւական խաղաղութեան խթանումը տարածաշրջանի մէջ» խորագիրով Ռոուզ Ռոթ 89-րդ սեմինարը: Սեմինարի առանցքին են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Հայաստանի համագործակցութիւնը Եւրոատլանտեան համայնքին հետ, միջնորդութեան դերը Էւրոպայի Ղարաբաղի հակամարտութեան, բարեփոխութեան հաստատումը իբրեւ Հայաստանի պաշտպանական բարեփոխումներու մաս, ինչպէս նաեւ ՆԱԹՕ-ի գործընկերութիւնը Հարաւային Կովկասի մէջ:

# ԿԵԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎԱՐԿԱՆԻՇԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆ 60-ՐԴՆ Է



Ըստ վերջերս կատարուած վիճակագրութեան մը, Հայաստան կը գտնուի 60-րդ հորիզոնականի վրայ, կեանքի որակի վարկանիշերու շարքին: Վրաստանն ու Թուրքիան կը գտնուին 57-րդ եւ 50-րդ դիրքերու վրայ, իսկ Ատրպէյճանը ցանկէն դուրս կը մնայ:

Հայաստան գերազանցած է Ղազախստանի (63), Մոլտաւիայի (66), Ռուսաստանի (72) եւ Ուբանիայի (75) վարկանիշերը:

Առաջին հնգեակի մէջ կը գտնուին Չուիցերիան, Գերմանիան, Շուէտը, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Ֆինլանտան, իսկ վերջինն է Վենեզուէլան:

Կեանքի որակի ցուցանիշները հիմնուած են սպառողական ընդունակութեան, բժշկական սպասարկման, ապրանքներու գիներու, բնապահպանական վիճակի եւ անվտանգութեան մակարդակներու վրայ:

# Գերմանիոյ 12 քաղաքներու քաղաքապետները...

Շար. էջ 6-էն

Ուղեկցութեամբ քաղաքապետները այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց Ցեղասպանութեան մեկուկէս միլիոն սուրբ նահատակներու յիշատակին:

Հիւրերը ծաղիկներ խոնարհած են անմար կրակի մօտ, այնուհետեւ այցելած Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ, ծանօթացած են փաստագրական ցուցադրութեան, ապա գրառում կատարած պատուաւոր հիւրերու յուշամատեանին մէջ:

# Նոր վեպ Պողոս Գուրբելեանի գրիչէն «Ազգատոհմիս Գողգոթան Առաքելութիւն Ի Մարաշ»

Հեղինակը իր այս վեպը նուիրած է. «Սոյն հատորը կը ձօնեմ բոլոր ժամանակներու Յեղասպանութեան զոհերուն»:

Ուրեմն Հայոց Յեղասպանութենէն հարիւրամեակ մը սահելէն ետք, հայ գրագետը պիտի չկարենայ չգրել հայ ահեղագոյն տառապանքին մասին, պրպտելով եղածը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ ամբողջ ժողովուրդի մը բնաջնջումը տապարով, եաթաղանով, կրակուած երկաթով, այսինքն անմարդկային անասելի միջոցներով:

Այս անգամ գրագետ արծակագիրին նիւթը իր ազգատոհմին պատմութիւնն է, որ կու գայ Հաճընէն ու Մարաշէն: Ու ինք՝ հեղինակը այս վեպին, ծնունդը այդ ազգատոհմին վերապրողներէ սերած:

Պողոս Գուրբելեան պարզ պատմող մը չէ, ոչ ալ դէպքերուն ականատեսը, բայց լարելով իր հոգին, իր պեղումներուն բլուրները, աւագի շեղչերը լեռնակուտակ, ջանացած է վեպի վերածել իր տոհմին պատմութիւնը՝ թե՛ ժամանակակից պարուած կեանք մը, հուրի ու սուրի կեանքը, սուտ պետութիւններու չարանենգ այս աշխարհին մէջ:

Եղեռնը ապրած գերդաստանի զաւակը ահաւոր պատմութիւններ լսելով, փաստաթուղթեր պեղելով չէր կրնար չդիմել ողորջ եզրակացութիւնները մեզի տալու իրականութիւններէ աւելին, որովհետեւ օսմանցիին գործադրած Եփրատի նման հոսող արիւնի պատմութիւն էր, ժողովուրդ մը ամբողջ մատնելով պատրաստուած սովի ու բռնազաղթի իր դարաւոր Հայրենիքէն:

Հերոսները վեպին իր ծնողներն են եւ մեծ հայրերն ու մեծ մայրերը: Անոնք կրնային ամենակարող ըլլալ եւ զանոնք այլ կերպ ներկայացնելը անհնարին էր: Ահա թէ ինչո՞ւ վեպին մէջ կը հանդիպինք հերոսութիւններու, որոնք դժուար թէ ապահովուէին օսմանցիին կեռ եաթաղանին տակ, ճնշումի ահաւորութեան դէմ: Եղածը ուրեմն վերապրելու, կեանքը շարունակել կարենալու անհունօրէն հզօր ճիգի արդիւնք է, զոր կը կոչենք հերոսութիւն:

Թուրքը չհասաւ իր նպատակին, այսինքն չհասաւ վերջին հայը սպանելու եւ երկիրը զուտ օսմանեան դարձնելու նպատակին, քանի որ Օսմանին վառած խարոյկէն ծնան Պողոս Գուրբելեաններ, այսինքն գիրի մարդիկ, որոնք աշխարհին պատմեցին դժոխային այն կեանքը զոր ապրեցաւ հայը, բայց վերապրելով երեք անգամ տիրացաւ անկախութեան, ըսելու համար աշխարհին. - դուք խուլ, կոյր, համր էք, բայց մենք ահա՛ կանք ու տակաւին կը շատանք:

Ապրելու համար ծնածին մահուան բերան չէք կրնար նետել: Պողոս Գուրբելեան գրողին եզրակացութիւնը այդ է առանց իր գրածներուն մանրամասնութեանց դիմելու:

Տակաւին պայթարը պիտի շարունակուի այլ վեպի մը մէջ, ուր հայը տիրացած պիտի ըլլայ ոչ միայն իր ամբողջական հողերուն, այլ ստանայ հատուցում, լեռնակուտակ կորուստներու հատուցում:

Գուրբելեանին ուզածը, մեր ալ ուզածը՝ հող ու հատուցում: Ոչ թէ ուզածը, այլ պահանջա՛ծը:

Այս վեպը վերջ տուած է լալկանութեան եւ առաջ քաշած հերոսայնութիւնը մեր ժողովուրդին: Գայլն ու աղուէսը ի վերջոյ չեն կրնար յաղթել արծիւին:

Ինչպէս հեղինակը կ'ըսէ. «Սակայն բառիս բուն առումով «Ազգատոհմիս Գողգոթան» գործին դայեակն ու խրախուսողը հանդիսացաւ երկուորեակ եղբայրս, երբ բաժակ մը խմիչքի վրայ օր մը ինծի հարց տուաւ, թէ «ինչո՞ւ կը խրտչէի ազգատոհմիս բաժին ինկած գողգոթան վիպագրելէ»:

Փոքր եղբօրն ալ խրախուսանքին վրայ կը գրուի այս վեպը, ուր օգտագործուած է ճնշումի դէմ հակաճնշումի բնական պատասխանը: Հերիւրուած է չենք կրնար ըսել՝ երբ հեղինակը կը հերոսացնէ վեպին հերոսները: Փաստը այդ հակաճնշումին մեր ժողովուրդին շահած ապրելու, վերապրելու եղելութիւնն է:

Գուրբելեան գրողը կը թելադրէ. «Հայ գրողը իր վեպը սպիտակ պաստառի համար պիտի գրէ ու «սցենար»ի նման խճճէ հետաքրքրական ֆանթաստիկ գործողութիւններով»:


Այո՛, հարիւր անգամ պաստառ պետք է բարձրանան մեր ժողովուրդին խենէշօրէն հարուածուած կեանքերը՝ ինչպէս ճարտարօրէն պաստառի վրայ բարձրացուցած են հրեաները իրենց հողթոսը:

Մերինը ծանր է աւելի: Անոնք հայրենիք ստեղծեցին: Իսկ մենք Հայրենիք կորսնցուցինք՝ ամբողջ Արեւմտեան Հայաստանը:


Վեպին մէջ կայ նաեւ դրական կեցուածք հանդէպ թուրքին. «Ներկայ գործին մէջ փորձած եմ մարդկայնացնել թուրքը: Ազնիւ թուրքեր ալ գոյութիւն ունեցած են, որոնք մարդկային վերաբերմունք ցոյց տուած են իրենց հայրենակից հայերու հանդէպ, յաճախ սուղ գին վճարելով իրենց զգացումներուն, գութին ու ազնուութեան համար»: Օսմանցիին դաժանութեան դէմ զինեալ պայթար եւ սակայն նաեւ անյիշաչար է գրողը:

Մարդկօրէն հասկնալի վեպ մըն է մատուցուածը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ



# ՄԱՅ ԱՐՓԻԿ ՄԻՍԱՔԵԱՆԻ



Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի Յունիս 20-ի համարէն ցաւով տեղեկացանք թէ իր հանգստեան տան մէջ Նոյն օրը մահացած է Փարիզ հրատարակուած, 2009-էն ի վեր դադրած, «Յառաջ» օրաթերթի երկարամեայ գլխաւոր խմբագիր Արփիկ Միսաքեան, յետ երկարատեւ անողոք հիւանդութեան:

Արփիկ Միսաքեան դուստրն էր 1915 Ապրիլ 24-ին ձերբակալուած բայց մազապուրծ՝ Փարիզ ապաստանած յանդուզն քաղաքական գործիչ Շաւարշ Միսաքեանի, որ 1920-ին հիմնած էր «Յառաջ» օրաթերթը ու վարած էր անոր խմբագրութիւնը մինչեւ իր մահը՝ 1957-ին: Թերթին խմբագրութիւնը անվերապահօրէն շարունակած էր իր դուստրը՝ Արփիկ:

## Հայաստանի Թեքեան... Շար. էջ 4-էն

Երախտագիտութիւն յայտնեց Հիմնադրամի հովանաւորներին, նուիրատուներին, հոգաբարձուներին, որոնց օժանդակութեան եւ ուշադրութեան շնորհիւ իրականութիւն են դառնում բոլոր ծրագրերը: Պրն. Ծուլիկեանն առանձնայատուկ շնորհակալութիւն յայտնեց մրցութեային յանձնախմբին:

Այնուհետեւ օլիմպիադայի մասնագիտական յանձնախումբը կարծիք արտայայտեց եւ գովասանագրեր, պատուգրեր եւ մրցանակներ յանձնեց բարձր առաջադիմութիւն դրսեւորած աշակերտներին: Շնորհաւորելով նրանց, յանձնախումբը կարեւորեց ուսումը եւ գոհունակութիւն յայտնեց, որ Թեքեան դպրոցներն ունեն բանիմաց, խելացի աշակերտներ, որոնք ձգտում են Նոր գիտելիքներ ձեռք բերել եւ Նոր բարձունքներ նուաճել: Բարձր գնահատանքի արժանացուցեցին նաեւ ուսուցիչները, որոնց ամենօրեայ տքնաջան ու բարեխիղճ աշխատանքի շնորհիւ աշակերտները Նոր ձեռքբերումներ են գրանցում:

տանքի շնորհիւ աշակերտները Նոր ձեռքբերումներ են գրանցում:

Միջոցառմանը ելոյթով հանդէս եկաւ նաեւ Արցախի Վ. Թեքեանի անուան թիւ 1 դպրոցի տնօրէն Անահիտ Քոսակեանը, որը թեքեանցիներին անուանից շնորհակալութիւն յայտնեց հիմնադրամին դպրոցներին աջակցութիւն ցուցաբերելու եւ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար, քանզի նրանք նպաստում են հայ դպրութեանն ու Նոր սերնդի դաստիարակութեանը:

Թեքեան Կենտրոնում տօնական տրամադրութիւնը շարունակեց համերգային ծրագրով, որն էլ ներկայացրեցին «Ուսմունք» վարժարանի տաղանդաշատ սաները:

Թեքեանական 5-րդ օլիմպիադայում յաղթող ճանաչուեցին եւ պատուգրերի ու արժէքաւոր նուէրների արժանացան Հայոց լեզու եւ գրականութիւն, Մաթեմատիկա, եւ Անգլերէն լեզուի իւրաքանչիւր բաժնի առաջին երեք եւ խրախուսական մրցանակներ ինչպէս նաեւ գովասանագրեր ստացողները:

ԹՂԹԱԿԻՑ

## WWW.KOMITAS.CA

COMPLEXE FUNÉRAIRE

### (514) 331-0400

**PRE-ARRANGEMENT 0% INTEREST  
MONUMENTS LOCAL AND FROM ARMENIA**

**MAINTENANCE SERVICE OF CEMETARIES IN ARMENIA**

**Sponsor A Teacher**  
In Armenia and Karabagh  
**15th Anniversary**

Since its inception in 2001, TCA's Sponsor a Teacher program has raised over \$520,000 and reached out to 5,256 teachers and school workers in Armenia & Karabagh.

Yes, I want to sponsor teachers in Armenia and Karabagh to continue helping them to educate the children, our future leaders. I would like to have the teacher's name and address.

\$160    \$320    \$480    other \$ \_\_\_\_\_

Name \_\_\_\_\_  
Address \_\_\_\_\_  
City \_\_\_\_\_ Province \_\_\_\_\_ Postal code \_\_\_\_\_  
Tel: \_\_\_\_\_

Make check payable to: Tekeyan Cultural Association  
825 Rue Manoogian  
St-Laurent QC H4N 1Z5

### Յայտարարութիւն

Այսու կը տեղեկացնենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը Օգոստոս 16-էն սկըսեալ, որ է Աստուածամօր Վերափոխման Տօնը (Խաղողօրհնէք), կը տրամադրէ Կիրակ-Նօրեայ օթօպիւսի սպասարկութիւն, դիւրացնելու համար հաւատացեալներու մասնակցութիւնը Ս. Պատարագներուն:

Մանրամասնութեան եւ արձանագրութեան համար կը խնդրենք հեռաձայնել Եկեղեցւոյ բարտուղարութեան (514) 279-3066 թիւին:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Երուանդ Ազատեանի 80-ամեայ յոբելեանի տօնակատարութեան առիթով տիար Գեորգ Թիւրքունեան «Ապագայ» շաբաթաթերթին կը նուիրէ 50 տոլար:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Պետրոս Պետրոսեան կարճատեւ հիւանդութենէ մը ետք՝ իր ապաքինման առիթով, «Ապագայ» շաբաթաթերթին կը նուիրէ 50 տոլար:

### Ապաքինման մաղթանք

Տեղեկացանք թէ վերջերս տիար Սարգիս Էքիզեան ենթարկուած է վիրաբուժութեան մը եւ Ներկայիս կը բոլորէ դարմանումի շրջան մը տան մէջ:

Թ.Մ.Միութեան եւ «Ապագայ» շաբաթաթերթի վարչութիւններու անունով շուտափոյթ եւ ամբողջական ապաքինում կը մաղթենք պրն. Էքիզեանին:

### Շնորհակալութեամբ ստացանք՝

**Keghart.com**  
2012 - 2014

Views, Reviews, Interviews  
Dikran Abrahamian, Minas Kojayan, Jirair Tutunjian

## «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ» թեմայով համաժողով



ՀՀ սփիւռքի նախարարութիւնը եւ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ուսումնարանը սիրով կը հրաւիրեն մասնակցելու «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ» թեմայով համաժողովին, որ տեղի պիտի ունենայ 2015 թ. Յուլիս 29-30 ՀՀ ԳԱԱ նախագահութեան նիստերու դահլիճին մէջ:

Հայաստանի եւ Սփիւռքի մասնագետները, մտաւորականները կը հրաւիրենք մասնակցելու քննարկումներուն՝ հետեւեալ ուղղութիւններով.

**Արեւմտահայերէնի պահպանութեան, գործառութեան, ուսուցման, կանոնարկման խնդիրներ.**

**Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ.**

**Հայերէնի առջեւ ծառայած մարտահրաւերներ:**

Համաժողովին մասնակցիլ ցանկացողներուն կը խնդրենք յայտարարութիւնները ներկայացնել մինչեւ 2015 թ. Յուլիս 20:

Կը խնդրենք Ձեր գեկուցման դրոյթներն ու առաջարկները ուղարկել մինչեւ ս.թ. Յուլիս 25, lingvinst@sci.am ել փոստով:

Համաժողովի մասին տեղեկատուութիւն կրնաք ստանալ՝ այցելելով ՀՀ սփիւռքի նախարարութեան կայքէջեր՝ www.mindiaspora.am, www.hayernaysor.am եւ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ուսումնարանի կայքէջ՝ www.language.sci.am:

Հարցերու կամ լրացուցիչ տեղեկութիւններու համար կրնաք գանգահարել ՀՀ սփիւռքի նախարարութեան համահայկական ծրագիրներու վարչութեան գիտակրթական ծրագիրներու բաժնի պետ Սիրվարդ Համբարեանին, հեռ՝ +374 010 58 56 01 (117) եւ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ուսումնարանի հայոց լեզուի պատմութեան բաժնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Գայեանէ Մխիթարեանին, հեռախօս՝ +374 55 35-12-85:

ՀՀ ՍՓԻՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՆ

**Hrair Ketchedian, B.A. Écon.**  
Directeur Général  
Représentant en épargne collective pour Desjardins  
Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215  
Télécopieur : 450 688-1704

Siège social  
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4  
desjardins.com/caissedechomedey

**Association culturelle arménienne Tékéyan**  
ԹԷԿԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

# CAMP SEVAN

## 2015

6 JUILLET 2015 AU 21 AOÛT 2015 9H-16H

**Réservez tôt!**  
**Un camp trilingue qui valorise la pratique du français**  
Nombre de places limité

**130\$ par semaine incluant:**  
sorties + collations + barbecue hebdomadaire

**Initiation à la magie**

**Informatique**

**Musique + chant**

**Théâtre**

**Danse**

**Natation**

**Chasse aux trésors**

**Excursions**

**Arts plastiques**

**Cuisine**

**Activités sportives**

**Olympiades**

**Pour information Seta M. Astourian 514.266.0934 campsevan@yahoo.ca**  
**Centre Tékéyan 514.747.6680 Suivez-nous sur Facebook Camp Sevan!**

## Գանատահայ Տաւիտ Լեմիօ բռնցքամարտի աշխարհի ախոյեան



Յունիս 20-ին, Բռնցքամարտի միջազգային ֆեդերասիոնի (IBF- **International Boxing Federation**) ախոյանական մրցումներու ծիրէն ներս, գանատահայ Տաւիտ Լեմիօ չորս անգամ զգետնեց ֆրանսացի Յասան Ն՛Տամը եւ իրաւարարներու միաձայն որոշումով տիրացաւ Բռնցքամարտի միջազգային ֆեդերասիոնի թափուր մնացած Միջին կշիռքի դասակարգի ախոյեանի տիտղոսին:

Մրցումի ընթացքին Լեմիօ տիրական եղաւ եւ Ն՛Տամին «գետին փռեց» առաջին ռաունտին, երկու անգամ հինգերորդ ռաունտին եւ ձախ ձեռքի հարուածով մը՝ եօթներորդ ռաունտին՝ տիրանալով տիտղոսին:

Լեմիօ Միացեալ Նահանգներու մէջ «Ֆոքս» պատկերասփիւռի կայանին կողմէ սփռուած մրցումին ընթացքին տպաւորիչ մարտը կրնայ անոր աչքառու մրցումներ ապահովել: Արդէն իսկ կը խօսուի Աշխարհի բռնցքամարտի ընկերակցութեան ախոյեան Կենստի Կլովքինի կամ Նոյեմբերին Նախատեսուած WBC-ի ախոյեան Միկել Զոթթոյի եւ մեքսիքացի աստղ Սոլ (Քանելո) Ալվարեզի միջեւ մրցումին յաղթականին դէմ մարտի մը մասին:

Տաւիտ Լեմիօ (ծնեալ 22 Դեկտեմբեր 1988-ին, Մոնթրեալ, Գանատա) գանատացի արիեստավարժ բռնցքամարտիկ մըն է: Լեմիօ կը մրցի միջին կշիռքի դասակարգին մէջ: Ան ներկայիս Բռնցքամարտի միջազգային ֆեդերասիոնի միջին կշիռքի դասակարգի ախոյեանն է եւ նոյն կշիռքի WBC-ի Նախկին ախոյեանը:

Լեմիոյի հայրը ֆրանսացի է, իսկ մայրը լիբանանահայ: Անոր մօր մականունը Խաւլուճեանն է:

Լեմիօ հայերէնը սահուն կերպով կը խօսի: Ան բռնցքամարտի մարզաձեւին սկսած է հետեւիլ 9 տարեկանին:

## Իսա Երլմազ. «Կարսի պատմական յուշարձանները ոչնչացման եզրին են»

Պատմական Հայաստանի Կարս քաղաքին մէջ բնակուող թուրք գրող Իսա Երլմազը խօսած է Կարսի պատմական յուշակոթողներու ներկայ իրավիճակին մասին: Ընդգծելով, որ այս հիւնաւորք քաղաքը իր պատմութեամբ կրնայ տեղեկութեան հարուստ աղբիւր ըլլալ ֆիլմի արտադրութեան եւ գրական ստեղծագործութիւններու համար, գրողը մտահոգութիւն յայտնած է, որ առկայ լրուած վիճակին ու անտարբեր վերաբերմունքին պատճառով շատ շուտով Կարսի միակ պատմական յուշարձանը կրնայ մնալ ընդամենը ու միայն Կարսի բերդը, կը գրէ Ermenihaber.am-ը:

Թրքական «habertuar.com» լրատուակայքի համաձայն՝ Երլմազը յայտարարած է, որ ուրարտական ժամանակաշրջանէն ի վեր տարբեր քաղաքակրթութիւններու օճախ հանդիսացած Կարսի շարք մը պատմական կառոյցներ ոչնչացման վտանգի տակ են:

Երլմազը, որ «Հայու մը դին Կարսի մէջ» գիրքին հեղինակն է, հետեւեալ կարծիքը արտայայտած է. «Պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը կը շարունակեն ապրիլ անցեալէն մնացած այն յուշակոթողներու շնորհիւ, ինչպիսիք են պատմական տուները, ամրոցները, հիւրատուները, բաղնիքները: Անոնք արուեստի գործեր են:

«Մինչդեռ, օրինակ, վերջին տարիներուն Կարսի մէջ շարք մը ռուսական



տուներ քանդուած են ու անոնց փոխարէն նոր շէնքեր կառուցուած: Անհրաժեշտ է, որ մշակոյթի նախարարութիւնը անմիջապէս արձանագրէ եւ պաշտպանութեան տակ առնէ Կարսի մէջ գտնուող պատմական կառոյցները»: